KONRAD ADENAUER STIFTUNG

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Խմբագիր՝ Ալա Խառատյան

Հետազոտության ղեկավար՝ Պրոֆ. Դր. Արթուր Մկրտիչյան
Վերլուծաբան՝ Պրոֆ. Դր. Արթուր Աթանեսյան

© Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ /գ. մ./ հայաստանյան մասնաճյուղ, 2022
© Ա. Մկրտիչյան, Ա. Աթանեսյան

Բովանդակություն

Հետազոտության նկարագիրը 05

Հետազոտության արդյունքները 07

Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում իրականացված հարցման քանակական արդյունքները 13

Երևանաբնակ երիտասարդների հետ ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքները 13

Մարզաբնակ երիտասարդների հետ ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքները 31

Եզրակացություն 55

Հետազոտության նկարագիրը

Տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրների համատեքստում հայաստանցի երիտասարդների աշխարհաքաղաքական դիրքավորումն ու Ուկրաինայում Ռուսաստանի սկսած պատերազմի մասին կարծիքները պարզելու համար 2022թ. սոցիոլոգիական հետազոտություն է իրականացվել Երևանում և ՀՀ մարզերում: Հետազոտությունն իրականացվել է Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի մասնագետների կողմից՝ Հայաստանում «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի գրասենյակի հետ համագործակցությամբ:

Հետազոտության նպատակն էր պարզել հայաստանյան երիտասարդության պատկերացումները 2022թ. փետրվարի 24-ին սկսված Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի պատճառների և տարածաշրջանի, այդ թվում՝ Հայաստանի վրա դրա հնարավոր ազդեցության մասին:

Հետազոտությունն իրականացվել է հայաստանաբնակ երիտասարդների հետ ֆոկուս-խմբային քննարկումների մեթոդով: Ֆոկուս խմբային քննարկումներն իրականացվել են 22.10.22 – 22.11.22 ժամանակահատվածում Երևան քաղաքում և ՀՀ բոլոր մարզերում:

Ֆոկուս-խմբային քննարկումների միջոցով փորձել ենք լուծել մի շարք խնդիրներ, այդ թվում՝

1. պարզել, թե որոնք են արտաքին-քաղաքական իրադարձությունների վերաբերյալ հայաստանյան երիտասարդների համար առավել նախընտրելի տեղեկատվական աղբյուրները և ինչու,
2. ցույց տալ Հայաստանյան երիտասարդների պատկերացումները՝
   - ռուս-ուկրաինական կոնֆլիկտի դինամիկայի վերաբերյալ, այդ թվում՝ հակամարտության ուղղակի և անուղղակի կողմերի, ծագման պատճառների, մասնակիցների շահերի,
   - 2022թ. փետրվարի 24-ին ռազմական գործողություններ սկսելու պատճառների,
   - պատերազմի հանդեպ տարածաշրջանային կառույցների /ՆԱՏՕ, ԵՄ, ՀԱՊԿ և այլն/ և Հարավային Կովկասի պետությունների կողմնորոշումների վերաբերյալ:
3. գնահատել հայաստանյան երիտասարդների մտահոգությունները Ուկրաինայում Ռուսաստանի սկսած պատերազմի ընդլայնման և հատկապես Երրորդ համաշխարհային պատերազմի հավանականության վերաբերյալ,
4. պարզել հայաստանյան երիտասարդների կողմնորոշումներն այլ երկրների՝ որպես Հայաստանի բարեկամների կամ թշնամիների վերաբերյալ, գնահատել Ռուսաստանի և Ուկրաինայի տեղն այդ տիրույթում, հասկանալ երիտասարդների համապատասխան վերաբերմունքի պատճառները,
5. գնահատել Ուկրաինայում Ռուսաստանի սկսած պատերազմն ու հատկապես դրա ազդեցությունը հայաստանյան երիտասարդության կյանքի վրա, այդ թվում՝ գնահատելով.
   - ի՞նչ է փոխվել հայաստանյան հասարակության կյանքում Ուկրաինայի պատերազմի հետևանքով,
   - ինչպե՞ս է Ուկրաինայում տեղի ունեցող պատերազմն ազդում ՀՀ տնտեսության, մարդկանց կենցաղի վրա,
   - ի՞նչ ազդեցություն ունի պատերազմի ընթացքում Հայաստան տեղափոխված ռուսաստանցիների և ուկրաինացիների էական ներհոսքը:
6. պարզել հայաստանյան երիտասարդության կարծիքը ՀՀ և Լեռնային Ղարաբաղի անվտանգության, Ղարաբաղյան հակամարտության արդի վիճակի վրա Ուկրաինայի պատերազմի և դրա հնարավոր ազդեցության մասին,
7. պարզել հայաստանյան երիտասարդների պատկերացումները ուկրաինական

պատերազմի հավանական ելքերի և հետևանքների մասին,

8. պարզել, թե ըստ հայաստանյան երիտասարդների ինչպիսին է և ինչպիսին պետք է լինի ՀՀ դիրքորոշումը Ուկրաինայի պատերազմի հարցում.

- ինչո՞վ է պայմանավորված ՀՀ դիրքորոշումը այդ պատերազմում,
- ո՞ւմ պետք է սատարի Հայաստանը և ինչո՞ւ,
- որո՞նք են ՀՀ շահերն ու անհրաժեշտ գործողությունները,
- ո՞ւմ կաջակցեին ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցները:

Ֆոկուս-խմբային քննարկումներն իրականացվել են հարցաշարի միջոցով: Քննարկումների մասնակիցներին ի սկզբանե տեղեկացվել է հետազոտության նպատակի, խնդիրների, հետազոտությունն իրականացնող կազմակերպությունների, քննարկումների մասնակիցների իրավունքների և հարցաշարում ընդգրկված հարցերին իրենց կողմից տրվող պատասխանների, իրենց կարծիքի պաշտպանվածության մասին: Ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ մասնակիցներին բաժանվել է նաև քանակական հարցման ամփոփ հարցաթերթ, որի միջոցով փորձեցինք նաև դուրս բերել որոշակի քանակական տեղեկություններ երիտասարդների արտաքին-քաղաքական կողմնորոշումների վերաբերյալ՝ դրանք համեմատելով 2021թ. մարտ-դեկտեմբեր ամիսներին Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի և «Սոցիես» փորձագիտական կենտրոնի կողմից՝ Հայաստանում «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի գրասենյակի հետ համագործակցությամբ իրականացված հետազոտության ռելևանտ արդյունքների հետ: Տվյալ հետազոտության նպատակն էր բացահայտել ՀՀ-ում «Թավշյա հեղափոխությունից» և 2020 թ. ղարաբաղյան պատերազմից հետո հայաստանյան հասարակության ընկալումները ՀՀ արտաքին քաղաքական առաջնահերթությունների վերաբերյալ: Մասնավորապես, շեշտադրվել էր «բարեկամ» և «թշնամի» պետությունների, նախընտրելի և ոչ ցանկալի քաղաքական ուղղությունների և հարաբերությունների, արտաքին փոխհարաբերություններում ռուսական, եվրոպական և ամերիկյան (արևմտյան) ուղղությունների զարգացման և մի շարք այլ անկյունաքարային հարցերի վերաբերյալ հանրային պատկերացումների դուրսբերումը, բացատրությունն ու գնահատումը:1 Հետազոտությունն իրականացվել էր զանգվածային հարցման միջոցով, որը թույլ է տվել ներկայացնելու տարիքային խմբերի, այդ թվում՝ երիտասարդության արտաքին-քաղաքական պատկերացումների պատկերն ու առանձնահատկությունները: Այդ արդյունքների համատեքստում երիտասարդության ներկայացուցիչների հետ ֆոկուս-խմբային քննարկումները թույլ են տվել մանրամասնելու իրենց պատկերացումները, դուրս բերելու այդ պատկերացումների վրա ազդող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, ինչպես նաև մանրամասն ֆոկուսանալու ռուս-ուկրաինական հարաբերությունների հիմնախնդրի վրա՝ որպես տարածաշրջանային անվտանգության արդի կարևոր գործոնի:

2021թ.-ին իրականացված քանակական հետազոտությանը մասնակցած երիտասարդների /18-35 տարեկան/ թիվը 587 էր, որը կազմել է հարցվածների ընդհանուր թվի 38.4%-ը, մինչդեռ սույն հետազոտության ընթացքում կազմակերպված ֆոկուս-խմբային քննարկումների երիտասարդների թիվը 198-ն է: Համապատասխանաբար, քանակական հարցման երիտասարդ մասնակիցների և ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցների կարծիքների համեմատման նպատակ դրված չէ: Քանակական հարցման արդյունքների հետ սույն հետազոտության արդյունքների համադրման հիմնական նպատակն է հասկանալ հայաստանյան երիտասարդության արտաքին-քաղաքական ընդհանուր և թեմատիկ պատկերացումների խորքային պատճառները, ինչպես նաև փոփոխման հիմնական միտումները: Այդ համադրությունը ներկայացված է սույն վերլուծության առաջին մասում:

1 Աթանեսյան Ա.Վ., Մկրտիչյան Ա.Ե. (2022). Հայաստանյան հասարակությունը խաչմերուկում. արտաքին քաղաքական կողմնորոշումներ, առաջնահերթություններ եվ ընկալումներ: Սոցիոլոգիական հետազոտություն /կոլեկտիվ մենագրություն/: Եր.: «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի (գ. մ.) հայաստանյան մասնաճյուղ, 96 էջ: Հղումը՝ https://www.kas.de/documents/269781/0/Armenia-at-the-Crossroad.pdf/?fbclid=IwAR0l7sqEkCljyyPFJUH4ItZ0QLagL1xhBSaCDNIbGFI-ATwEvjuHaxVMqe8, (վերջին մուտք՝ 03.01.2023):

Հետազոտության արդյունքները

Իրականացված հարցման քանակական արդյունքները

Նախևառաջ երիտասարդների արտաքին-քաղաքական ընդհանուր տրամադրությունների միտումները հասկանալու համար իրենց տրվել է հարց, թե Արևմուտք-Ռուսաստան բաժանման մեջ ո՞ր բևեռին կուզենային, որ մոտ լիներ Հայաստանը: Համեմատենք ստացված պատասխանները նշված՝ 2021թ.-ին իրականացված հետազոտության արդյունքների հետ /Գծապատկեր 1, 2, 3/:

Գծապատկեր 1. Արևմուտք-Ռուսաստան բաժանման մեջ ո՞ր բևեռին կուզենայիք, որ մոտ լիներ Հայաստանը (2021թ. զանգվածային հարցման երիտասարդ ռեսպոնդենտների կարծիքները, %)

Արևմուտք-Ռուսաստան բաժանման մեջ ո՞ր բևեռին կուզենայիք, որ մոտ լիներ Հայաստանը, %



Գծապատկեր 2. Արևմուտք-Ռուսաստան բաժանման մեջ ո՞ր բևեռին կուզենայիք, որ մոտ լիներ Հայաստանը (2022թ.ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցների կարծիքները, %)

Արևմուտք-Ռուսաստան բաժանման մեջ ո՞ր բևեռին կուզենայիք, որ մոտ լիներ Հայաստանը, %



Գծապատկեր 3. Արևմուտք-Ռուսաստան բաժանման մեջ ո՞ր բևեռին կուզենայիք, որ մոտ լիներ Հայաստանը (2022թ.ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցների կարծիքները՝ ըստ հարցվածների բնակավայրի, տարիքի և սեռի, %)



Երիտասարդության շրջանում նկատելի են արտաքին-քաղաքական կողմնորոշումների փոփոխման հետևյալ միտումները.

1. Միանշանակ ռուսամետ և արևմտամետ կողմնորոշումները թուլանում են, դրանց կրողների քանակը զուգահեռաբար սակավանում է, հավանաբար՝ հայ ազգային շահերի և անվտանգության /այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության/ գործում Արևմուտքի և Ռուսաստանի դերակատարման անբավարար մակարդակի, հասարակության սպասումներին չհամապատասխանելու հետևանքով: Միանշանակ ռուսամետ կողմնորոշումները սակավանում են ավելի արագ, քան արևմտամետները, որը բացատրելի է ՌԴ դերակատարման հանդեպ ավելի շատ սկզբնական սպասումներով, քան Արևմուտքի, և, համապատասխանաբար, հիասթափվելու ավելի արագ տեմպերով:
2. Զուգահեռաբար երիտասարդների շրջանում արտաքին քաղաքական կողմնորոշումների նշանակալի միտումներից է որևէ բևեռին չհարելու միտումը. 2021 թ. իրականացված հետազոտության արդյունքների հետ համեմատ՝ 2022թ. ֆոկուս-խմբային քննարկումների երիտասարդ մասնակիցների՝ որևէ բևեռի չհարելը /24%/, ինչպես նաև Արևմուտքի և Ռուսաստանի շահերի բալանսավորումը /մեջտեղում լինելը՝ 15.5%/ հիմնական մոտեցումներից են:

Կարելի է նկատել նաև, որ արևմտամետությունն էապես ավելի ակնհայտ է ֆոկուս-խմբային քննարկումների արական սեռի ներկայացուցիչների մոտ և ավելի հասուն տարիքում /26-35 տարեկանում/: Ռուսաստանի հանդեպ միանշանակ դրական վերաբերմունքը քիչ տարածված է և փոխակերպվել է ավելի շուտ դրական վերաբերմունքի:

Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցներին տրվել է հարց, թե ներքոնշյալ անվտանգային ո՞ր կառույցին անդամակցությունն է ավելի հեռանկարային Հայաստանի համար: Ստացված պատասխանները համադրվել են 2021թ.-ին իրականացված հետազոտության ընթացքում տրված նույն հարցի պատասխանների հետ (Գծապատկեր 4, 5, 6):

Գծապատկեր 4. Ձեր կարծիքով՝ ներքոնշյալ անվտանգային ո՞ր կառույցին անդամակցությունն է ավելի հեռանկարային Հայաստանի համար (2021թ. զանգվածային հարցման երիտասարդ ռեսպոնդենտները, %)

Ձեր կարծիքով, ներքոնշյալ անվտանգային ո՞ր կառույցին անդամակցությունն է ավելի հեռանկարային Հայաստանի համար, %



Գծապատկեր 5. Ձեր կարծիքով՝ ներքոնշյալ անվտանգային ո՞ր կառույցին անդամակցությունն է ավելի հեռանկարային Հայաստանի համար (2022թ. ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցներ, %)

Ձեր կարծիքով, ներքոնշյալ անվտանգային ո՞ր կառույցին անդամակցությունն է ավելի հեռանկարային Հայաստանի համար, %



Գծապատկեր 6. Ձեր կարծիքով՝ ներքոնշյալ անվտանգային ո՞ր կառույցին անդամակցությունն է ավելի հեռանկարային Հայաստանի համար (2022թ. ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցների պատասխաններ՝ ըստ բնակավայրի, տարիքի և սեռի, %)

Ձեր կարծիքով ներքոնշյալ անվտանգային ո՞ր կառույցին անդամակցությունն է ավելի հեռանկարային Հայաստանի համար. %



2021թ. զանգվածային հարցման արդյունքների հետ համեմատ՝ 2022թ. ֆոկուս-խմբային հարցման երիտասարդ մասնակիցների կարծիքն արտահայտում է ՀԱՊԿ-ի և ապա՝ ՆԱՏՕ-ի հանդեպ վստահության անկում, ընդ որում՝ ՀԱՊԿ-ի հանդեպ վստահության անկումն ավելի զգալի է, և դրա փոխարեն զգալի է տարածաշրջանային անվտանգության որևէ կառույցին չանդամակցելու տրամադրությունների, փաստորեն՝ դրանցից հիասթափվելու միտումը:

Կարելի է տեսնել, որ ՀԱՊԿ-ին ՀՀ անդամակցության արդյունավետության մասին որոշակի պատկերացումն առկա է միայն երիտասարդ կանանց մոտ, մինչդեռ արական սեռի երիտասարդները կնախընտրեին կա՛մ անդամակցումը ՆԱՏՕ-ին, կա՛մ որևէ անվտանգային կառույցին չանդամակցելը:

ՀԱՊԿ-ի հանդեպ երիտասարդների վստահության հարցն անհրաժեշտ է քննարկել՝ հաշվի առնելով հատկապես 2020թ. ղարաբաղյան պատերազմից հետո այդ կազմակերպության վերաբերյալ հանրային քննարկումներում տարածվող տեսակետը, թե ՀԱՊԿ-ին անդամակցությունը Հայաստանին առհասարակ որևէ օգուտ չի տալիս, և թե անհրաժեշտ է այն դադարեցնել: Չնայած որոշ քաղաքական ուժերի կողմից հնչեցվող նման կոչերին՝ պաշտոնական մակարդակում ՀԱՊԿ-ից դուրս գալու մասին ցանկություն չի հնչել, իսկ փորձագիտական մակարդակում հարցը քննարկվում է այն տեսանկյունից, թե ՀԱՊԿ-ից դուրս գալու դեպքում ինչ խնդիրներ կարելի է լուծել, և ինչ նոր խնդիրներ կառաջանան: ՀԱՊԿ-ը լքելը գրեթե հավասարազոր է Ռուսաստանին յուրօրինակ «պատերազմ» հայտարարելուն: Դրա մասին հայտարարելն արդեն իսկ լի է բազմաթիվ լուրջ սպառնալիքներով: Այդ պարագայում հարց է առաջանում՝ արդյո՞ք Հայաստանը կարժանանա Արևմուտքի համապատասխան օգնությանը: Այս հարցի պատասխանը բաց է, քանի որ այստեղ արդեն խնդիրը դուրս է քաղաքական հայտարարությունների շրջանակից: Փորձագիտական շրջանակներում կան հիմնավոր կասկածներ, թե ՀԱՊԿ-ից դուրս գալով և Հայաստանից ռուսական ռազմակայանը դուրս բերելով ոչ մի անվտանգային խնդիր գործնականում չի լուծվելու: Աշխարհաքաղաքական բևեռներից մեկի հետ կոնֆլիկտի գնալով՝ հնարավոր չէ հուսալի անվտանգության մեխանիզմ կառուցել: Նախ՝ անհրաժեշտ է զարգացնել ներքին կարողությունները: Հարցի պատասխանը փորձագետները փնտրում են Ուկրաինայում Ռուսաստանի սկսած պատերազմի համատեքստում, որում Արևմուտքի դերակատարությունը մեծ է, բայց արդյո՞ք բավարար է: Եվրամիության երկրների՞, թե՞ Ռուսաստանի հետ Հայաստանի ավելի սերտ համագործակցության նախապատվության վերաբերյալ հարցին մեր ռեսպոնդենտների պատասխանները համադրվել են 2021թ.-ին իրականացված հետազոտության ընթացքում տրված նույն հարցի պատասխանների հետ (Գծապատկեր 7, 8):

Գծապատկեր 7. Եվրամիության երկրների՞, թե՞ Ռուսաստանի հետ Հայաստանի ավելի սերտ համագործակցությունը... (2021 թ. զանգվածային հարցման երիտասարդ ռեսպոնդենտները, %)



Գծապատկեր 8. Եվրամիության երկրների՞, թե՞ Ռուսաստանի հետ Հայաստանի ավելի սերտ համագործակցությունը... (2022թ. ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցներ, %)



Համեմատելով վերոնշյալ երկու հետազոտությունների արդյունքները՝ կարող ենք արձանագրել երիտասարդության ընկալումներում գրանցված հետևյալ միտումները.

- Էապես զգալի է Եվրամիության՝ որպես հայ ազգային ավանդական արժեքներին սպառնացող գործոնի հանդեպ վերաբերմունքը, այդ թվում՝ համեմատած Ռուսաստանի հետ,
- զգալի է Ռուսաստանի՝ որպես ՀՀ ինքնիշխանությանը սպառնացող գործոնի ընկալումը,
- համեմատած զանգվածային հարցման արդյունքների հետ՝ ֆոկուս-խմբային քննարկումներին մասնակցած երիտասարդների պատկերացումներում Եվրամիությունն ավելի նպաստավոր է ՀՀ անվտանգության ապահովման համար, քան Ռուսաստանը,
- երիտասարդների պատկերացումներում՝ Եվրամիությունը Ռուսաստանից էապես ավելի նպաստավոր է Հայաստանում կյանքի որակի բարձրացման, տնտեսական զարգացման, ժողովրդավարացման համար:

Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցներին տրված քանակական բնույթի վերջին հարցն էր, թե Ռուսաստան-Ուկրաինա հակամարտության մեջ ո՞ր բևեռին պետք է մոտ լինի Հայաստանը: Ստացվել են հետևյալ պատասխանները (Գծապատկեր 9, 10):

Գծապատկեր 9. Ռուսաստան-Ուկրաինա հակամարտության մեջ ո՞ր բևեռին պետք է մոտ լինի Հայաստանը (ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցներ, %)



Գծապատկեր 10. Ռուսաստան-Ուկրաինա հակամարտության մեջ ո՞ր բևեռին պետք է մոտ լինի Հայաստանը (ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցների պատասխաներ՝ ըստ բնակավայրի, տարիքի և սեռի, %)



Չնայած նրան, որ ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցների մոտ հիմնականում առկա էին արտաքին-քաղաքական ոչ մի բևեռին չհարելու, ապա՝ արևմտամետ միտումներ, որոնց հետ համեմատ ակնհայտ էր ռուսամետության անկման միտումը, Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի պայմաններում գրեթե միանշանակ է որևէ կողմին չաջակցելու մեծամասնական կողմնորոշումը /մոտ 50%/: Որոշ իմաստով ակներև է նաև Ռուսաստանի և Ուկրաինայի հավասարակշռման ցանկությունը /12%/, սակայն ռեսպոնդենտների փոքր խմբերի առումով Ռուսաստանին աջակցում են ավելի շատ /մոտ 8%/, քան Ուկրաինային /մոտ 5.6%/:

Ուկրաինային ավելի շատ են աջակցում իգական սեռի հայաստանցի երիտասարդները, ինչպես նաև փոքր-ինչ ավելի շատ՝ քաղաքային բնակիչները: Ֆոկուս-խմբային հարցումների մասնակից գյուղաբնակները ավելի ռուսամետ են, ինչը նաև արձանագրվել էր 2021թ.-ին իրականացված զանգվածային հարցման արդյունքում և բացատրվել ՌԴ-ում սեզոնային արտագնա աշխատանք իրականացնողների կազմում հիմնականում գյուղաբնակների առկայությամբ, որոնք նաև իրենց հարազատներին ուղարկում են դրամական փոխանցումներ և, համապատասխանաբար, շահագրգռված են հայ-ռուսական կայուն հարաբերություններով:

Այնուհետև դիտարկենք ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում հայաստանյան երիտասարդների կողմից ներկայացված արտաքին քաղաքական մոտեցումները ռուս-ուկրաինական հակամարտության վերաբերյալ:

Ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքները՝ երևանաբնակ երիտասարդների հետ

Ինչպես արդեն նշվել է, Երևանում իրականացվել է 6 ֆոկուս-խմբային քննարկում մասնակիցների հետևյալ կազմով.

	Անցկացման ժամանակահատվածը	Մասնակիցների քանակը և սեռը	Մասնակիցների տարիքը
1.	06.11.2022	4 տղամարդ, 3 կին	18-25
2.	09.11.2022	8 կին	18-25
3.	10.11.2022	7 տղամարդ	18-25
4.	12.11.2022	8 կին	26-35
5.	13.11.2022	5 կին, 2 տղամարդ	26-35
6.	15.11.2022	8 տղամարդ	26-35
	Ընդհանուր՝	45 մասնակից	

Վերջին տարիներին Հայաստանում գրանցված փոփոխությունները, գործընթացներն ու միտումները

Երևանաբնակ երիտասարդները նշել են մի շարք երևույթներ և գործընթացներ, որոնք իրենց կարծիքով բնութագրում են հայաստանյան հասարակության վերջին տարիների փոխակերպումը: Այդ երևույթները կարելի է խմբավորել ըստ տնտեսական, քաղաքական և սոցիալ-հոգեբանական տիպերի:

- Վերջին տարիների տնտեսական երևույթների և բնութագրիչների շարքում նշվել են՝ համապարփակ գնաճը,
- կոռուպցիայի մասնակի վերացումը,
- հատկապես Ուկրաինայում սկսված պատերազմի հետևանքով բնակարանների վարձակալության կտրուկ թանկացումը:

> ***«Տան վարձերն են թանկացել: Երևի 50 %-ով բարձրացել են մանավանդ ուկրաինական դեպքերով պայմանավորված, դրանից առաջ էլ արցախյան դեպքերի հետ կապված էր բարձրացել: Ու տան տերերն էլ, առիթից օգտվելով, շատացնում են վարձը, դա ստիպել է տան վարձի համար ավելի շատ գումար հատկացնել՝ այլ բաներից կրճատելով»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Վերջին տարիների հայաստանյան կյանքի քաղաքական բնութագրիչներից նշվել են՝

- «Թավշյա հեղափոխությունը», դրանով համապարփակ ոգևորվածությունն ու հետագայում հիասթափությունը,
- 2020թ. ղարաբաղյան պատերազմը, կորուստները, պատերազմին հաջորդած այլ քաղաքական պարտություններ և կորուստներ,
- Հայաստանի քաղաքական ուժերի պառակտվածությունը, ներքաղաքական կոնֆլիկտը:

Վերջին տարիների հայաստանյան հասարակության սոցիալ-հոգեբանական բնութագրիչներից նշվել են՝

- ներքաղաքական կոնֆլիկտայնությամբ պայմանավորված՝ բնակչության բևեռացվածությունը, պառակտումը,
- ներքաղաքական ապատիան, հիասթափվածությունը, անտարբերությունը,
- ավանդական արժեքների կորուստը, նպատակային արժեզրկումը,
- միասեռականների հիմնախնդիրների բարձրաձայնումն ու նրանց ցուցադրական վարքը /նշվել է բացասական իմաստով/:

Ներքաղաքական հակասություններով պայմանավորված՝ հասարակության բևեռացումը, կոնֆլիկտայնությունը նշվել է ֆոկուս-խմբային բոլոր քննարկումներում.

> ***«Հասարակության բևեռացումը շատ է խորացել, մարդիկ անհանդուրժող են դարձել, եթե ինչ-որ մեկը ինչ-որ թևի է պաշտպանում, միանգամից թշնամական արձագանք են ստանում: Քաղաքական առումով շատ է այդ տարաձայնությունը ու միանգամից անձնական մակարդակ է տեղափոխվում: Ես գիտեմ մարդիկ, ովքեր իրենց բարեկամների հետ հարաբերությունները կտրել են, քանի որ հականիկոլական են, իսկ բարեկամները նիկոլական են»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

> ***«Ես հինգ տարի է, որ Հայաստանում եմ ապրում, նախկինում գալիս էի Հայաստան, որպես տուրիստ, ժողովուրդը էն ժամանակ ավելի ուրախ էին, հիմա ուրախ չեն, ավելի ագրեսիվ են»:***
> ***Ա.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Նման պայմաններում երիտասարդների կողմից արտահայտվել են Հայաստանից արտագաղթելու ցանկություն, դրան ուղղված փորձեր, այդ թվում՝ օտար լեզուներ սովորելու, ուսման նպատակով արտերկիր /հիմնականում՝ ԵՄ և ԱՄՆ/ մեկնելու միջոցով:

> ***«Եթե մի քանի տարի առաջ մարդիկ լավատես էին երկրի ապագայի հետ կապված, հիմա մի հատ մեծ շերտ որևէ հույս չի կարողանում կապել իր երկրի ապագայի հետ, շատերը արդեն թողնում են երկիրը: Շատերը հնարավորության դեպքում կգնային, սակայն ինչ-ինչ պատճառներով չեն գնում, իսկ որոշ մասն էլ ուղղակի ասում է, որ կմնանք՝ ինչ կլինի՝ կլինի»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

> ***«Հիմա բոլորը հույս ունեն դուրս գնալու: Վատը էն է, որ բոլորի նպատակը էդ է: Վստահ եմ էստեղի նստածների 70 %-ը ուզում է էստեղից դուրս գնա, իսկ մնացած 30 %-ը՝ երևի մտածում է էդ մասին»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

Արտագաղթելու ցանկության և այն արդի տնտեսական, քաղաքական և սոցիալ-հոգեբանական գործոններով բացատրելու հետ մեկտեղ արտահայտվել են նաև Հայաստանում ապրելու, այն պաշտպանելու և ամրապնդելու մասին ցանկություններ.

> ***«Ինչքան էլ վատ լինի, ես իմ ապագան էստեղ եմ տեսնում ու լավագույնը, որ կարող եմ անել, դա լավ կրթությունը և իմ մասնագիտությունը ծառայեցնել պետությանը: Ու անիմաստ էլ չեմ ընտրել իմ մասնագիտությունը՝ թուրքագիտությունը, և մի քանի ուղղություններով աշխատանքներ տանել պետության համար»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

Հանրային իրադարձությունների մասին տեղեկատվության ստացման նախընտրելի միջոցները

Երևանաբնակ երիտասարդների հետ ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում պարզ է դարձել, որ հանրային իրադարձությունների և գործընթացների մասին տեղեկատվության առավել տարածված աղբյուրներն են առցանց ԶԼՄ-ները և սոցիալական ցանցերը, ապա՝ միջանձնային հաղորդակցումը: Հատկապես երիտասարդների կրտսեր տարիքային խմբում տարածված են Telegram և TikTok ալիքներով լրատվամիջոցների սպառումը: Նկատելի էր Facebook սոցիալական ցանցը հիշատակելու սակավությունը: Տարբեր խմբային քննարկումներում որպես քաղաքական տեղեկատվության միջոց նշվել է ֆեյսբուքյան «Զարթոնք» ակումբը (https://www.facebook.com/zartonqakumb/): Պետք է նշել, որ երիտասարդների կողմից տեղեկատվության աղբյուրների շարքում առանձին նշվել են Վարդան Ղուկասյանի («Դոգ» մականունով) առցանց ալիքները, որոնցից երիտասարդներն օգտվում են քաղաքական իրադարձությունների մասին տեղեկանալու նպատակով:

Տարիքային այս խմբի մոտ հեռուստատեսությունը վստահություն և տարածում չունի, այն համարվում է կողմնակալ և քաղաքականացված.

> ***«Ես շատ չեմ հետևում, քանի որ հիմնականում Հայաստանում ամեն ալիք մի կուսակցությանն է պատկանում և խոսում է իր օգտին: Ես ընդհանրապես լուրեր չեմ լսում, շատ վատ բեմականություն է ու հրաշքի եմ երևի սպասում, որ լավ բան լինի: Ավելի շատ շփվում եմ այնպիսի մարդկանց հետ, ովքեր քաղաքականությունից գաղափար ունեն և ավելի շատ բան գիտեն»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

> ***«Քանի որ TV-ով ամեն մի ալիք ինչ-որ մի օլիգարխինն ա, մենակ իրա մասին են խոսում, դրա համար հեռուստացույցով էդպես չեմ հետևում»:***
> ***Ա.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Հետաքրքիր է արձանագրել երիտասարդների մոտ հայկական լրատվամիջոցների հանդեպ վստահության ցածր մակարդակը. օտար լեզուներին տիրապետողները նախընտրում են հետևել օտարերկրյա ԶԼՄ-ներին: Հատկապես երիտասարդների ավագ խմբի ներկայացուցիչները սովոր են համատեղել տարբեր լրատվամիջոցներն ու աղբյուրները՝ հավասարակշռված տեղեկատվություն ունենալու, կողմնակալությունից խուսափելու համար.

> ***«Ես սկբից նայում եմ, թե որ լրատվականն է, հետո նայում եմ, թե ընկերներից ով է շեյր արել: Հետո բացում եմ լրատվականներն եմ նայում, մենք բուհում մեդիագրագիտություն ենք անցել ու ահագին էդ մասով տեղեկացված եմ, դրա համար կարողանում եմ հասկանալ՝ ինչը ոնց է»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Ուկրաինայում սկսված պատերազմի դինամիկան երևանաբնակ երիտասարդների պատկերացումներում

Հակամարտության պատճառները

Ուկրաինայում Ռուսաստանի սկսած պատերազմի պատճառների շարքում երիտասարդները նշել են ինչպես Ռուսաստանի գործողությունները (հարձակողական, ագրեսիվ, կանխարգելիչ), այնպես էլ Արևմուտքի (սադրիչ, աշխարհը բաժանող) և Ուկրաինայի քաղաքականությունը (միտված դեպի Եվրոպական միության հետ միավորումը, Ռուսաստանի տեսանկյունից՝ դավաճանական): Մասնավորապես հակամարտության պատճառներից են՝

- իր ուժն ու գերպետություն լինելը աշխարհին ցուցադրելու Ռուսաստանի ցանկությունը (այդ թվում՝ Խորհրդային Միությունը վերականգնելու փորձ է),

- պատերազմը Ռուսաստանի արձագանքն էր իր դեմ ՆԱՏՕ-ի պետությունների միացյալ քաղաքականությանը (ՆԱՏՕ-ն Ռուսաստանին սադրել է),
- տեղի է ունենում աշխարհի բաժանման հերթական գործընթաց, և Ուկրաինայի տարածքը այդ բաժանման թիրախներից է,
- Ուկրաինան փորձել է Ռուսաստանի ավանդական ազդեցությունից դուրս գալ դեպի Արևմուտք, որը Ռուսաստանը իր համար սպառնալիք դիտարկեց և փորձեց կանխել.

> ***«Ուկրաինան փորձում է զարգանալ և որպես զարգանալու աղբյուր Ռուսաստանին չի տեսնում ու փորձում է դուրս գալ նրա տակից, ու Ռուսաստանին էլ դա ձեռք չի տալիս, դրա համար էլ սկսել է պատերազմը»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

> ***«Ուկրաինայում հաստատել են եվրոպական արժեքներ կամ դեմոկրատիա, դա Ռուսաստանին վնաս էր ու չէր կարող կառավարել»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

Բոլոր խմբերում տեղի ունեցած քննարկումը ցույց տվեց երիտասարդների բավարար տեղեկացվածությունն ու խորքային գիտելիքները, վերլուծական կարողություններն ու մոտեցումները: Կոնֆլիկտային դինամիկայի մասին հակիրճ և շատ մասնակիցների կարծիքն արտահայտող մտքերի օրինակներից է հետևյալ արտահայտությունը.

> ***«Սկսեց Ուկրաինայի կողմնորոշումից, որը Ռուսաստանի՝ որպես գերտերություն շահերից չէր բխում, ու դրա համար պետք էր ինչ-որ պատճառ մոգոնել, որպեսզի նախահարձակ լինել կամ գնալ փրկարարի դեմքով, որ Լուգանցկն ու Դոնեցկը փրկի: Սկզբում էնպես էր, որ Պուտինը պիտի Ուկրաինան գրավի, որպեսզի ներքին իշխանությանը բերի պրոռուսական կողմնորոշման, ոչ թե արևմտամետ: Բայց երբ տեսավ, որ դա չի ստացվում, իր հերոսի, սուպերմենի շորերով գնաց, որ էդ երկու քաղաքներին ազատի, այսպես ասած, այդ «նացիստական ուկրաինացիներից»: Ինձ թվում է, որ հիմնական դրդապատճառը գերտերությունների շահերն են ու վտանգը»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Քննարկումների ընթացքում տարածված կարծիքներից էր Ռուսաստանի գործողությունները որպես ՆԱՏՕ-ի ընդլայնման կանխարգելում դիտարկելը: Այս տեսակետի համաձայն՝ Ռուսաստանը փորձել է վերահսկել Ուկրաինայի արտաքին քաղաքականությունը՝ թույլ չտալով դրա մերձեցումն Արևմուտքի հետ, փորձելով կանխել ՆԱՏՕ-ի հայտնվելը Ռուսաստանի անմիջական սահմանին և հանդիպել է պատասխան գործողությունների.

> ***«Ռուսաստանին ուզում էին դնել այն վիճակում, որում գտնվում է Իրանը՝ տնտեսական շրջափակում, սանկցիաներ և այլն, իսկ Ուկրաինան լավ գործիք էր այս եղբայրական ժողովուրդներին իրար դեմ հանելու համար և լավ գործիք էր Ռուսաստանին թուլացնելու համար: Հետևանքները մենք հիմա տեսնում ենք, որ Ուկրաինային նրանք հիմա զինում են, բայց ՆԱՏՕ-ի կազմում չեն ավելացնում, որպեսզի ՆԱՏՕ-ն զորք չուղարկի Ուկրաինա: Էստեղ իրականում Ուկրաինա-Ռուսաստան խնդիրը չկա, էստեղ հիմնականում Ռուսաստան-Արևմուտք խնդիրն է, որպես սառը պատերազմի տրամաբանական շարունակություն»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

> ***«Ես կարծում եմ, որ եթե էս պատերազմից խուսափեին, ապա բախումը կլիներ մի քանի տարի հետո ուրիշ կետում, դա անխուսափելի կլիներ: Ես սրան նայում եմ որպես Ռուսաստան-ԱՄՆ հակամարտության կողմից, Ուկրաինային շատ քիչ եմ նշանակություն և դեր տալիս»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

> ***«Ես կարծում եմ, որ եթե էս պատերազմից խուսափեին, ապա բախումը կլիներ մի քանի տարի հետո ուրիշ կետում, դա անխուսափելի կլիներ: Ես սրան նայում եմ որպես Ռուսաստան-ԱՄՆ հակամարտության կողմից, Ուկրաինային շատ քիչ եմ նշանակություն և դեր տալիս»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Ռուսաստանի գործողությունների բացատրությունը՝ որպես ռեակտիվ, պատասխան, նույնպես պարունակել է քննադատություն, որը կապված էր Ուկրաինային՝ որպես շատ մոտ ժողովրդին վնասելու, կորուստներ հասցնելու փաստի հետ: Միևնույն ժամանակ նկատելի է, որ իրավիճակը մի քանի կողմից դիտարկելու պարագայում Ռուսաստանի հանդեպ ուղղակի մեղադրանքների փոխարեն հնչել են հակամարտության նաև մյուս կողմերի, այդ թվում՝ Արևմտյան պետությունների սադրիչ գործողությունների, ինչպես նաև համակարգային խնդիրների մասին դիտարկումներ.

> ***«Բժեզինսկու՝ «Վելիկայա շախմատնայա դոսկա»[2]... այդտեղ ներկայացնում է, որ այս աշխարհում կա մեկ գերտերություն, դա ԱՄՆ է, ու ինքն է որոշում, թե աշխարհում կյանքը ինչ հունով ընթանա: Ու հիմա հայտնվել է Ռ.-ն՝ հանձինս ամբիցիոզ Պուտինի, ով ունի իր գաղափարներում, մտքերում Խորհրդային Միության հզոր պետություն լինելու պատմությունը, իրականությունը, փորձում է հետ բերել դա, ու հիմա էդ պայքարն է: ԱՄՆ-ն դա գիտակցելով երբեք չի թողնի, որ մեկ այլ գագաթ հայտնվի և իր ձեռքը վերցնի, իսկ Ռ.-ը փորձում է ամեն ձև դրան հակազդել: Ու էս ամենում երրորդ աշխարհի պետությունները, հանձինս մեզ ու Ու.-ի, տուժում են էդ կոնֆլիկտի մեջ: Ռ-ն ու ԱՄՆ-ն Ու.-ի դաշտում կռվում են իրար դեմ»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Հակամարտության ուղղակի և անուղղակի մասնակիցները

Բոլոր քննարկումներում հակամարտության անմիջական մասնակիցներ են նշվել **Ռուսաստանը և Ուկրաինան**, ապա՝ **Ռուսաստանը և Արևմուտքը** (ԱՄՆ-ն, ՆԱՏՕ-ն՝ Ուկրաինայի տարածքում և այն օգտագործելով): Այն դեպքում, երբ ուղղակի մասնակից են նշվել Ռուսաստանն ու Ուկրաինան, որպես անուղղակի մասնակիցներ կամ կողմեր նշվել են Եվրամիությունը, ԱՄՆ-ը, ՆԱՏՕ-ն՝ Ուկրաինայի կողմից, իսկ առանձին ՀԱՊԿ երկրները (Բելառուսը, Ղազախստանը)՝ ՌԴ կողմից: Հայաստանը՝ որպես ռուս-ուկրաինական հակամարտության ուղղակի կամ անուղղակի մասնակից կամ կողմ, որևէ քննարկման ժամանակ չի նշվել: Մինչդեռ ՀՀ-ն ունի իր շահերը, որոնք պայմանավորում են Հայաստանի այս կամ այն արձագանքը տվյալ հակամարտության հանդեպ (այդ մասին՝ ստորև):

Այն դեպքերում, երբ սույն հակամարտության անմիջական կողմ են նշվել Ռուսաստանը և Արևմուտքը (գլոբալ հակամարտության ձևաչափով, այդ թվում՝ Ուկրաինայի բաժանման նպատակով և ուկրաինական տարածքներում), որպես Արևմտյան կողմի ակտիվ ներկայացուցիչներ նշվել են ԱՄՆ-ը, ԵՄ-ը, Մեծ Բրիտանիան, Իսրայելը:

2 Քննարկման մասնակիցը նկատի ունի Brzezinski Zbigniew K. 2006. The Grand Chessboard: American Primacy and Its Geostrategic Imperatives. [Repr.] ed. New York NY: Basic Books, որի անունը նշել է ռուսերեն թարգմանությամբ, որով սույն գիրքը առավել տարածված է հետխորհրդային տարածքում:

> ***«Ես կարծում եմ, որ ամեն ինչը կառավարվում է Անգլիայի և Իսրայելի կողմից, Անգլիան է ղեկավարում, ամեն ինչի հիմքում Անգլիան է՝ իր պլանով: Բայց Էստեղ ես կողմ եմ Ռուսաստանին, քանի որ Ուկրաինան սլավոնական ազգ է և իմաստ չկար արևմուտքին միանալու: ԱՄՆ-ն ինչ կապ ուներ Ուկրաինայի հետ, ամբողջ կյանքում Ռուսաստանն է եղել իր կողքին: Իսկ հիմա ԱՄՆ-ն ատոմակայան է կառուցում Ուկրաինայում, թունավոր լաբորատորիաներ է կառուցում: Ես լսել եմ, որ Ռուսաստանին զայրացրել է այն, որ Ուկրաինայում ԱՄՆ-ի սարքած ատոմակայանները պետք է բացվեն, իսկ Ռուսաստանը դեմ է եղել, քանի որ եթե ինչ-որ բան լինի, կտարածվի նաև իր երկրի վրա: Իրականում թույլ ղեկավար է Ուկրաինայում, ոնց որ մեր մոտ, որպես խամաճիկ է: Տեսեք, ԱՄՆ-ն տալիս է զենք, բայց հստակ ինչ-որ բան չի անում: Ոնց որ շոու լինի, քանի որ եթե իրականում դեմ լիներ ԱՄՆ-ն, էս պատերազմը վաղուց կանգնեցված կլիներ»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Քննարկումների այն մասնակիցները, որոնք Ռուսաստանի պատերազմը Ուկրաինայում դիտարկել են գլոբալ ձևաչափով՝ որպես գերտերությունների պայքարի դրսևորում, զուգահեռներ են անցկացրել այդ պատերազմի և արդի մյուս հակամարտությունների միջև ինչպես հետխորհրդային տարածքում (Աբխազիայում և Հարավային Օսեթիայում, Լեռնային Ղարաբաղում), այնպես էլ Մերձավոր Արևելքում (Սիրիա): Այս տեսանկյունից՝ որպես Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի մեջ ակտիվորեն ներգրավված երրորդ կողմ նշվել է նաև Թուրքիան, որը, մասնակիցների կարծիքով, ակտիվորեն օգտվում է սույն պատերազմից՝ միջնորդ օղակի կարգավիճակով.

> ***«Հիմա Թուրքիան միակ արևմտյան պետություններից է, որ սանկցիաներ չի կիրառում, հակառակը, լավ հարաբերություններ է զարգացնում ու Южный поток գազի գիծը: Թուրքիան շահում է, հանում է գազը տրանզիտ, որը հա՛մ իր տնտեսական վիճակը կապահովի, համ էլ Եվրոպայի վրա ռիչագ դավլենի, որ տեսեք՝ տրանզիտը մերն է, կուզենք կփակենք, կուզենք կբացենք, համ էլ իրենք կարող են գազի վրա գին ավելացնել: Ինքը հիմա ներկայանում է այն պետությունը, որը կարող է լինել միջանկյալ պետություն՝ կապը պահպանելու Ռուսաստանի և Ուկրաինայի մեջ»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի գլոբալ ձևաչափում որոշակի ներգրավվածություն ունեցող պետություն՝ է նշվել նաև Չինաստանը, որն առաջնորդվում է իր շահերով.

> ***«Չինաստանն է, բայց Չինաստանն էլ աջակցում է Ռուսաստանին, քանի որ ՆԱՏՕ-ի համար երկրորդ թշնամին է»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմն ուղղակի և անուղղակի ազդեցություն ունի Հարավային Կովկասի տարածաշրջանում, որի երեք հանրապետությունները, ըստ ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցների, ունեն այդ պատերազմի հանդեպ չհատվող շահեր և միմյանցից տարբերվող մոտեցումներ:

Վրաստանը, դիտարկելով Ռուսաստանը որպես սպառնալիք, ՌԴ-ին չի աջակցում և առաջնորդվում է Արևմուտքի մոտեցումներով: Միևնույն ժամանակ, երիտասարդների կարծիքով, դա Վրաստանին ուկրաինամետ չի դարձրել:

Ադրբեջանը, ըստ քննարկումների մասնակիցների, ստանձնել է երկակի մոտեցում. մի կողմից՝ ցուցադրաբար իրեն ներկայացնում է որպես ՌԴ-ի հետ սերտորեն համագործակցող, սակայն մյուս կողմից՝ անուղղակիորեն աջակցում է Ուկրաինային: Այդ աջակցությունը փոխադարձ է. 2020թ. ղարաբաղյան պատերազմի ժամանակ Ուկրաինան աջակցել է Ադրբեջանին, իսկ պատերազմից հետո Ադրբեջանին շնորհավորել.

> *«Ադրբեջանի մամուլին և լրատվականներին հետևելով՝ կարող եմ ասել, որ Ադրբեջանը ահավոր հակառուսական է: Ահագին բժշկական օգնություն Ադրբեջանն ուղարկեց Ուկրաինային և հայտարարությունների տեսքով է ցույց տվել, որ Ուկրաինայի կողքին է: Վերջերս էլ մի որոշ թիվ ադրբեջանցիներ օգնություն էին ցուցաբերել Ուկրաինայի բանակին»:*
> *Ի.ս., 18-25 տ. խումբ, Երևան*

> *«Ուկրաինայի նախագահը, որ պաշտոնապես շնորհավորեց Ադրբեջանին, որ հաղթել եք, եղբայր-պետություն և այլն: Ես չգիտեմ, թե ինչպես են իրենք եղբայր-պետություն: Դա հենց չմոռանալով ամոթ կլիներ մեզ, եթե մենք ինչ-որ մի դրական դիրքորոշում արտահայտեինք էս պարագայում»:*
> *Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան*

Հայաստանի դիրքորոշումը Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի հանդեպ պայմանավորված է մի քանի հանգամանքով: Մի կողմից, երիտասարդների խոսքերով, Հայաստանը Ռուսաստանից էապես կախվածության պատճառով պետք է ռուսամետ դիրքորոշում հայտնի նաև այս հարցում: Հայաստանի՝ ռուսամետ դիրքորոշման պատճառներից են նաև Ադրբեջանի և Ուկրաինայի միջև համագործակցությունն ու Վրաստանի՝ հակառուսական դիրքորոշումը, որից Հայաստանի դիրքորոշումը, որպես Ռուսաստանի դաշնակցի, պետք է տարբերվի:

> *«Թերևս մեր տարածաշրջանում քիչ թե շատ Հայաստանն է չեզոք դիրքորոշում հայտնել, բայց ավելի շատ պռոռուսական ուղղություն ունի, քանի որ Վրաստանը բացառապես պռոուկրաինական է և չի թաքցնում իր թշնամանքը Ռուսաստանի հետ, Ադրբեջանն էլ դե Ուկրաինային զինում է»:*
> *Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան*

> *«Իրականում մեր տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունն այնքան մեծ է, որ իրենց սեփական շահերից ելնելով՝ ոչ ոք Ռուսաստանին դեմ դուրս չի գա: Օրինակ՝ մեր ամեն ինչը կապված է Ռուսաստանի հետ»:*
> *Ի.ս., 18-25 տ. խումբ, Երևան*

Մյուս կողմից՝ Հայաստանը փորձում է չվատթարացնել հարաբերությունները Արևմուտքի հետ, հավասարակշռել Ռուսաստանի և Արևմուտքի ազդեցությունը տարածաշրջանում, որը պայմանավորված է Հայաստանի խաչմերուկային դիրքով, սակավ ռեսուրսներով, անվտանգային բարդ իրավիճակով, որոնք ստիպում են ոչ միանշանակ դիրքորոշում ստանձնելու.

> *«Քանի որ ԱՄՆ-ն սկսել է մեր տարածաշրջանով հետաքրքրվել, մենք էլ սկսել ենք Արևելքին ու Արևմուտքին ինչ-որ ձևով հաճոյանալ՝ տարածք վաճառել փոխաբերական իմաստով: Մենք աշխարհագրորեն շատ վատ ու կարևոր օղակ ենք, մենք օղակ ենք աշխարհի ու Իրանի մեջ, Թուրքիայի ու Ադրբեջանի մեջտեղում պուճուրիկ պետություն ենք, որը Մեծ Թուրանի արանքում է և փակում է դա: Եվ դա բոլորն են հասկանում, ու Էնպես չի, որ Ռուսաստանը մեզ շատ է սիրում, դրա համար է էստեղ բազա դրել: Դա իր Հարավային անվտանգության համար է: Պիտի կարողանանք մեր կարևոր աշխարհագրական դիրքը «վաճառենք» ինչ-որ մեկին: Աշխարհում ոչ ոք էդպես չի անում, որ ասի՝ մենք էսինչի կողմից ենք ու վերջ»:*
> *Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան*

Այսպիսով՝ Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի համատեքստում Հայաստանի

դիրքորոշումը չի համարվում միանշանակ ռուսամետ: Միևնույն ժամանակ, երիտասարդների կարծիքով, այն ավելի ռուսամետ է, քան մյուս պետությունների դիրքորոշումը, և զիջում է միայն Բելառուսին: Բացի դրանից, ինչպես նշվել է, եթե Հայաստանի դիրքորոշումն այս հարցում ավելի շուտ ռուսամետ է, քան հակառուսական, ապա հայաստանյան հասարակության վերաբերմունքն այդ պատերազմին պակաս ռուսամետ է, քան ՀՀ իշխանություններինը: Չնայած Ուկրաինայի ադրբեջանամետ դիրքորոշմանը՝ Հայաստանը փորձում է նաև չվատթարացնել հարաբերություններն Ուկրաինայի հետ:

> ***«Մենք պետական առումով պիտի աջակցենք Ռուսաստանին, չնայած ես՝ որպես մարդ, աջակցում եմ Ուկրաինային: Էս օրով միայն Ռուսաստանն է մեզ համար ինչ-որ բան անում»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

Գրեթե բոլոր քննարկումների ժամանակ արտահայտվել է այն միտքը, որ Ուկրաինայում սկսած Ռուսաստանի պատերազմի ընթացքում Հայաստանում անշարժ գույքի, բնակարանների վարձակալության թանկացման հետ մեկտեղ, այդ շուկան և զբոսաշրջությունն ակտիվացել է, ինչը դիտվել է որպես հայաստանյան տնտեսության համար նպաստավոր գործոն.

> ***«Ռուսաստանի քաղաքացիները ավելի շատ են եկել Հայաստան, քան Ուկրաինայինը: Բացել են էդքան նոր կազմակերպություններ, տալիս են հարկեր, էդքան ծախսում են: Ես՝ որպես հյուրանոցում աշխատող, տեսնում եմ, որ շարժը մի տարվա մեջ ավելացել է: Անցած տարի հյուրանոցը փակվելու եզրին էր, իսկ հիմա, ինչ պատերազմը սկսել է, մինչև վերջերս մենք օր չենք ունեցել, որ սենյակները ազատ լինեն: Էդքան գումար է մտնում, ու եթե կառավարությունը խելացի օգտագործի դա, արտաքին պարտքից կարող է շատ մեծ մասը փակել»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

Պատերազմի ընթացքն ու հնարավոր զարգացումները

Ֆոկուս-խմբային բոլոր քննարկումներում Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմը դիտարկվել է Ռուսաստանի և Ուկրաինայի ռազմատնտեսական ներուժի, ԵՄ և ՆԱՏՕ-ի միջամտության հավանականության, Երրորդ համաշխարհային պատերազմի հավանականության տեսանկյուններից:

Տեսակետները կարելի է բաժանել չորս խմբի: Առաջին խմբի ներկայացուցիչները քննարկել են Ռուսաստանի ռազմական գործողությունների հարցը՝ նշելով դրանց տևողության, կորուստների, ցածր արդյունավետության ի սկզբանե չնախատեսված լինելը, որը, ըստ երիտասարդների, կարող է պայմանավորված լինել Ռուսաստանի զինված ուժերի կարողությունների գերագնահատմամբ և ուկրաինական ներուժի թերագնահատմամբ, արևմտյան դաշնակիցների կողմից Ուկրաինային ցուցաբերվող աջակցության էական նշանակությամբ, ինչպես նաև Ռուսաստանի կառավարող վերնախավի կողմից սեփական ներուժի ոչ համարժեք հաշվարկմամբ:

> ***«Ես մի պարզ ճշմարտություն գիտեմ, որ ուժեղների վրա չեն հարձակվում: Եթե ուզում ես, որ պատերազմ չլինի, դու պետք է այնքան հզոր լինես ու քեզանից բան ներկայացնես, որ քո վրա վախենան առաջ գալ: Նույնն էլ եթե բանակցային գործընթացում հնարավոր լիներ բալանսի բերել ռուս-ուկրաինական պատերազմը, դա էն դեպքում պատերազմ չէր լինի, եթե Ուկրաինան շատ հզոր բանակ լիներ կամ պետություն լիներ, ու Ռուսաստանը վախենար: Ըստ երևույթին, ռուսները չէին սպասում նման հակահարվածի: Ես խորապես համոզված եմ, որ Պուտինին սխալ ինֆորմացիա են հասցրել Ուկրաինայի բանակի և իրանց պատրաստվածության մասին, ու ռուսները մտածում էին, որ մի քանի օրում կմտնեն, իրենց անելիքը կանեն ու կփակվի էս թեման, մինչդեռ արդեն քանի ամիս է շարունակվում է»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Մասնակիցների կարծիքների երկրորդ համախումբը վերաբերում է նրան, որ պատերազմը անձամբ ՌԴ նախագահ Վ. Պուտինի բացթողումն է, և եթե նա ժամանակին այն կանխարգելեր կամ չսկսեր, այլ դիմեր այլ հնարավոր միջոցների, պատերազմից հնարավոր կլիներ խուսափել:

> ***«Միանշանակ կոնֆլիկտից հնարավոր էր խուսափել, բայց միայն այն դեպքում, եթե Պուտինի տեղը ուրիշ մտածելակերպով նախագահ լիներ, հնարավոր էր կանխվեր: Նկատի ունեմ, որ էդ նախագահը լիներ ավելի ժողովրդավար ու իրան էդպես ագրեսորի պես չպահեր»:***
> ***Ա.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Կարծիքների երրորդ խումբը վերաբերում է Ուկրաինայի նախագահ Զելենսկու գործողություններին, որոնք, ըստ այս կարծիքն արտահայտած երիտասարդների, Արևմուտքի պետությունների աջակցությամբ հրահրել են Ռուսաստանի գործողությունները, Ռուսաստանին սադրել.

> ***«Մի կողմից՝ Ուկրաինան էլ իրեն ճիշտ չպահեց, իմանալով, որ Ռուսաստանն ԱՄՆ-ի հետ ընդհանրապես չունի, ու վարչապետ ընտրեցին նախկին կոմիկին, ով տանուլ տվեց էս իրավիճակը և արեց այնպես, ինչպես ուզում էր: Մյուս կողմից՝ Ռուսաստանն էլ է մեղավոր, քանի որ բացեիբաց ստեղծեց էս իրավիճակը՝ չնայած ԱՄՆ-ն էլ լավ էլ հասկանում էր և օգտագործեց իր ռեսուրսները Ուկրաինայում, և Ուկրաինան էլ համաձայնվեց դրան: Ավելի շատ Ուկրաինան էր մեղավոր»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

> ***«Ընդհանրապես Ռուսաստանը ՆԱՏՕ-ի դեմ էլ է հայտարարություններ անում, ու եթե Շվեդիան ու Ֆինլանդրան մտնում են ԱՄՆ-ի սահմանների մեջ, այսպես ասած, էլի ԱՄՆ-ի սահմանները մեծանում են Ռուսաստանի մոտ, ու հավանականությունը փոքր չի, որ բախումներ կլինեն»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

Կարծիքների չորրորդ խումբը վերաբերում է Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի անխուսափելիությանը: Ըստ այդ տեսանկյան՝ սա գլոբալ հակամարտության մի մասն է, դրսևորում և կապված է աշխարհի հերթական բաժանման, միջազգային ասպարեզում նոր ուժերի առաջ գալու, թույլ պետությունների հանդեպ ազդեցության փորձերի, միմյանց միջև մրցակցության հետ:

> ***«Ես կարծում եմ, որ եթե էս պատերազմից խուսափեին, ապա բախումը կլիներ մի քանի տարի հետո ուրիշ կետում, դա անխուսափելի կլիներ: Ես սրան նայում եմ Ռուսաստան-ԱՄՆ հակամարտության կողմից, Ուկրաինային շատ քիչ եմ նշանակություն դեռ տալիս: Կարծում եմ, որ եթե չլիներ բախման կետը Ուկրաինան, ապա տարիների և որոշելու հարց կլիներ, թե որտեղ բախվեն այդ ուժերը»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

Երրորդ համաշխարհային պատերազմի հավանականությունը, ըստ երիտասարդների, ավելի ցածր է, քան Ռուսաստանի և Արևմուտքի միջև շարունակական լոկալ պատերազմները «երրորդ աշխարհում»՝ Ուկրաինայում, Հարավային Կովկասում, Մերձավոր Արևելքում:

Հայաստանի բարեկամներն ու թշնամիները՝ Ուկրաինայում տեղի ունեցող պատերազմի համատեքստում

Գրեթե բոլոր խմբային քննարկումներում երևանաբնակ երիտասարդները նշել են Հայաստանի՝ բարեկամներ չունենալու և բազում թշնամիներ ունենալու մասին: Որպես թշնամի երկրներ են նշել Թուրքիան, Ադրբեջանը, նաև Իսրայելն ու Պակիստանը.

> ***«Թշնամիների մեջ են նաև Իսրայելն ու Պակիստանը, քանի որ Թուրքիայի հետ աջակից են»:***
> ***Ա.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Սակավաթիվ բարեկամների շարքում նշվել են Ֆրանսիան և Իրանը, որոնց շուրջ տարաձայնություններ գրեթե չեղան: Ֆրանսիան համարվում է Հայաստանի ավանդական բարեկամը, որը, ըստ երիտասարդների կարծիքի, այսօր էլ ակտիվորեն աջակցում է Հայաստանին, այդ թվում՝ Ղարաբաղյան հակամարտության պայմաններում: Իրանն այսօր առավել միանշանակ հակաթուրքական և հակաադրբեջանական դիրքորոշում է ստանձնել, որը նպաստում է Հայաստանի շահերի պաշտպանությանը: Արևմտյան պետությունների, այդ թվում՝ ԱՄՆ-ի դերակատարումը տարածաշրջանային հարցերում բխում է միայն ԱՄՆ շահերից, իսկ աջակցությունը Հայաստանին ավելի շատ ցուցադրական է. դրանով են երիտասարդները նաև բացատրում ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների տան նախկին խոսնակ Նենսի Փելոսիի այցը Հայաստան.

> ***«Այս պահին միայն Իրանն է, որ իրոք դաշնակից է, քանի որ միայն Իրանին է ձեռնտու, որ Հայաստանը չանցնի Ռուսաստանի կազմում, առավել ևս՝ Թուրքիայի: Մյուս կողմից էլ՝ ես մեր պատերազմը չեմ նույնացնում ռուս-ուկր. պատերազմի հետ, քանի որ եթե Ռուսաստանի տեսանկյունից եմ նայում, ապա նորմալ է, քանի որ ոնց որ հիմա Ղարաբաղը առանձին նախագահ ունենա, առանձնանա, բայց էլի Հայաստան է, ու ոնց որ հիմա Ղարաբաղը հայտարարի, ասի՝ Հայաստան, ես չեմ ուզում ձեզ օգնել, ես հիմա գնում եմ թուրքին օգնելու»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

> ***«Դե յուրե մենք ունենք դաշնակիցներ, կան պայմանագրեր, բայց դե ֆակտո չունենք: Նենսի Փելոսիի գալը ես գնահատում եմ որպես քայլ Ռուսաստանի դեմ»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Այս իմաստով մասնակիցների մի մասը, համեմատելով Արևմտյան երկրների և Ռուսաստանի դերակատարումը Հայաստանի անվտանգության հարցերում, նախընտրում է Ռուսաստանը.

> *«Ես ինչու եմ կարևորում Ռուսաստանի դերը՝ իրենց էդքան չսիրելով: Քանի անգամ պատերազմի ընթացքում պարզ դարձավ, որ տարբեր երկրների կոչերին որևէ արձագանք չեղավ՝ ԱՄՆ, Ֆրանսիա և այլն, բայց հենց Ռուսաստանը սաստեց, որ չկրակեն, միանգամից էդպես էլ եղավ»:*
> *Ա.ս., 26-35 տ. խումբ, Երևան*

> *«Եթե, օրինակ, ընտրություն լինի ԱՄՆ թե Ռուսաստան, ես միանշանակ, Ռուսաստանի կողմնակիցն եմ»:*
> *Ի.ս., 18-25 տ. խումբ, Երևան*

Ռուսաստանի՝ որպես Հայաստանի դաշնակցի կերպարը երիտասարդների պատկերացումներում միանշանակ չէ և խիստ քննադատվում է: Չնայած քննարկումների հիմնական՝ Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի թեմային, Ռուսաստանի քննադատությունը հիմնականում պայմանավորված էր Հայաստանին ոչ պատշաճ աջակցելու, իր սեփական շահերը հետապնդելու, երիտասարդների կարծիքով՝ Հայաստանը պարբերաբար զոհաբերելու պատմական փորձի և արդի իրականության հետ: Երիտասարդների պատկերացումներում Ռուսաստանի հետ հարաբերությունները կարելի է անվանել «հարկադրված բարեկամություն»: Հնչել են նաև առանձին կարծիքներ, որոնցում Ռուսաստանը դասվել է թշնամական պետությունների շարքը.

> *«Դե չպիտի մոռանանք, որ Ռուսաստանը մեզ ամեն ինչով ամենամեծ մատակարարող երկիրն է՝ սննդային ապրանքներից, գազից սկսած, այլ բաներով վերջացրած: Հետո էլ մեր դաշնակիցն է գոնե պաշտոնական մակարդակով»:*
> *Ա.ս., 26-35 տ. խումբ, Երևան*

> *«Ռուսաստանի համար էլ մենք Հարավային բուֆեր ենք հանդիսանում, նա մեր դաշնակիցն է եղել այնքանով, դրա համար էլ Գյումրիում բազա կա և այլն»:*
> *Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան*

> *«Իսկ գլխավոր թշնամի միանշանակ Ռուսաստանին եմ համարում, քանի որ նոր եմ ընդունվել համալսարան, ուսումնասիրել եմ հայոց պատմությունը, ու մեր բոլոր պարտությունները միայն Ռուսաստանի հետ եմ կապում, մենք ուղղակի իր ձեռքին խաղալիք ենք: Դե պարզ է, որ մեր ռեալ թշնամիները Ադրբեջանն ու Թուրքիան են»:*
> *Ի.ս., 18-25 տ. խումբ, Երևան*

Եթե Ռուսաստանի հետ Հայաստանի հարաբերությունները նկարագրվում են որպես ավելի շուտ բարեկամական, ապա Ուկրաինայի հետ բարեկամության համար, ըստ բոլոր քննարկումների, Հայաստանը հիմքեր չունի: Ուկրաինան Հայաստանի համար ոչ բարեկամական էր Ղարաբաղյան հակամարտության և հատկապես 2020թ. պատերազմի ժամանակ ու դրանից հետո, այդ թվում՝ Ադրբեջանին զինելով և դիվանագիտական ու տեղեկատվական աջակցություն ցուցաբերելով: Այդ մասին նշել են բոլոր խմբային քննարկումներում.

> *«Առաջինը Ադրբեջանին Ուկրաինան էր շնորհավորել մեր 44-օրյա պատերազմից հետո»:*
> *Ա.ս., 26-35 տ. խումբ, Երևան*

> *«Չպիտի մոռանանք, որ Ուկրաինան Ադրբեջանին զենքեր էր վաճառում, ֆոսֆորայինը՝ այդ թվում, որը չի թույլատրվում օգտագործել պատերազմների ժամանակ»:*
> *Ա.ս., 26-35 տ. խումբ, Երևան*

> ***«4-5 տարի առաջ Ուկրաինան իմ սիրած պետություններից էր, բայց երբ պատերազմի ժամանակ իրանք Ադրբեջանին օգնել են, ես հիասթափվեցի: Դե հետո իրանք մեր պատերազմին բանի տեղ չէին դնում, ու հետո որ իրանց մոտ սկսվեց պատերազմը, զուտ սկզբից իրանք մեր նկատմամբ անտարբեր էին, հետո իրանց թվաց, որ իրանք են դրա մեջ, մենք պիտի իրանց հասկանանք, դրանից ես շատ հիասթափվեցի»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

Չնայած վերոնշյալին՝ երիտասարդների ընկալումներում այդ ամենը չպետք է այս պատերազմում հակաուկրաինական դիրքորոշման հիմք դառնա: Միևնույն ժամանակ, ուկրաինամետ կարգախոսներն ու Ուկրաինայում ընթացող պատերազմում Ուկրաինային աջակցելու որոշակի փորձերը երիտասարդները ոչ տեղին են համարում.

> ***«Ես երբեք հարաբերություն չեմ տեսել, ու տարօրինակ է, որ հիմա շատ ուկրաինասեր ենք դարձել: Մենք իրանց դիտարկել ենք նույն սլավոնական ժողովուրդը: 20 թվից հետո եղավ փոփոխություն, երբ ասեցին, որ ուկրաինական ֆոսֆորը գործածեցին պատերազմում, և մեր երեխաները զոհվեցին, բոլորը ասեցին, որ Ուկրաինան պաշտպանում է Ադրբեջանին, մեկ էլ մի տարի հետո ինչ-որ շատ շուտ մոռացանք էդ ֆոսֆորը, իրանց օգնելը Ադրբեջանին ու դարձանք խաղաղասեր, բարի արջուկներ, որոնք մտածում են, որ՝ վա՛յ, կոտորվեց ուկրաինական ժողովուրդը»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունները՝ Ուկրաինայում ընթացող պատերազմի հետևանքով

Քննարկումների մասնակից երիտասարդները վախենում կամ մտավախություն են հայտնում մի շարք երևույթների կապակցությամբ՝

- Հայաստանի անվտանգային իրավիճակից, ԼՂ-ի և այլ հայկական տարածքների կորստից, մարդկային զոհերից,
- այլ պետությունները կբաժանեն Հայաստանը,
- հերթական պատերազմի սպառնալիքից, բայց այս անգամ Հայաստանի տարածքում,
- ապագայի անորոշությունից,
- թուրքերի հնարավոր ներհոսքից,
- երկիրը կորցնելուց,
- արտագաղթից,
- Երրորդ համաշխարհային պատերազմից:

> ***«Վախենում եմ, որ էս մի պուճուր կտորն էլ, որ ինչ-որ ձև պահպանվել էր, կեսը կգնա ռուսներին, կեսը՝թուրքերին: Արցախի կորստից հետո ինձ թվում էր, որ ես էլ ոչ մի բանից չպիտի վախենամ, բայց պարզվում է, որ դա դեռ վերջը չի: Մենք էնքան արագ ենք գահավիժում, որ կմնա մի հատ կորիզ՝ գուբերնիա, ռուսական գուբերնիա անունով, ոնց որ ժամանակին եղել է Երևանի գուբերնիա»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

> ***«Ինձ վախեցնում է այն, որ մեր տարածաշրջանում Ռ.-ի դերը բավականին թուլացել է, դրա կողքին ուժեղացել են Իրանի և Թուրքիայի ախորժակները: Վերջին դեպքերից հետո մենք ունենք 140 հեկտար տարածքի օկուպացիա, ու դրան Ռ.-ն ոչ մի ձև չի կարողանում պատասխանել: Դա ոչ թե ռուս-թուրքական ախպերությունն է, այլ այն է, որ Ռ.-ն էլ լավ վիճակում չէ, ու արդյունքում մենք էլ՝ որպես իր ազդեցության գոտի, տուժում ենք»:***
> ***Ի.ս.,18-25 տ. խումբ, Երևան***

Ռուս-ուկրաինական տևական հակամարտության բացասական ազդեցությունը

Հայաստանի անվտանգության վրա դրսևորվեց Ղարաբաղյան հակամարտության, այդ թվում՝ 2020 թ. ղարաբաղյան պատերազմում Հայաստանի պարտությամբ և հետագա անվտանգային հիմնախնդիրների առաջացմամբ: Ռուսաստանի զբաղվածությունը ուկրաինական հիմնախնդրով, Արևմտյան երկրների կողմից Ռուսաստանի հանդեպ պատժամիջոցների կիրառումը, ապա՝ Ուկրաինայում իրականացվող ռազմական գործողությունները Ռուսաստանին թույլ չտվեցին Հայաստանին պատշաճ աջակցություն ցուցաբերելու:

> ***«Ինձ թվում է Ադրբեջանը օգտվեց առիթից, տեսավ, որ Ռուսաստանը իր տարածքներում խառն է Ուկրաինայի հետ տարածքներ խլելով, պահը բաց չթողեցին, ու ներխուժեցին մեր սահմանները»:***
> ***Ա.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

> ***«Ինչքան Ռուսաստանի գլուխը խառն է Ուկրաինայով, էնքան Հայաստան-Ադրբեջան կոնֆլիկտից ինքը հեռվանում է, ինքն էլ իր հերթին Ադրբեջանին հնարավորություն է տալիս հետագա սանձազերծումներ իրականացնելու համար: Ադրբեջանը ասում է ռուսական զորքը հանեք Արցախից, ինքը չի ուզում, որ Ռուսաստանը ներկա լինի այստեղ ու դեմ է Ռուսաստանի օգնությանը Հայաստանին»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Երևանաբնակ երիտասարդների հետ խնդրի քննարկման արդյունքում դուրս են բերվել նաև հետևյալ հիմնական երևույթներն ու փոփոխությունները, որոնք կապված են Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի հետ, սակայն վերաբերում են Հայաստանի ներքին իրավիճակին.

- անշարժ գույքի, բնակարանների վարձակալության թանկացում,
- հյուրանոցային ծառայությունների զարգացում,
- առաջին անհրաժեշտության ապրանքների, սննդի սպառման ծավալների աճ՝ կապված ռուսաստանցի, ապա՝ ուկրաինացի ներգաղթողների/զբոսաշրջիկների մեծ հոսքերի հետ:

Այս ամենը, երիտասարդների կարծիքով, ունի և՛ դրական, և՛ բացասական դրսևորումներ: Դրական դրսևորումներից է վերոնշյալի արդյունքում հայաստանցիների որոշակի խմբերի եկամուտների աճը, բացասականներից՝ տեղացիների համար բնակարանների վարձակալության անմատչելիությունը, որում, ըստ քննարկումներում հնչած կարծիքների, հաճախ մեղադրում են ներգաղթածներին, որը, սակայն, սխալ է, քանի որ բնակարանների վարձակալման գները բարձրացնում են տեղացիները: Պետք է նշել, **որ բոլոր ֆոկուս-խմբային քննարկումներում Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ընթացքում Հայաստան տեղափոխված այս երկու երկրների քաղաքացիների մասին խոսելիս մասնակից երիտասարդներն օգտագործել են «ռուսներ» ընդհանրացված, հավաքական, կարծրատիպային անվանումը:**

> ***«Ես ռուսների գալը ավելի պոզիտիվ եմ գնահատում, քանի որ իրենք ավելի պրոդուկտիվ են, IT ոլորտում անգամ գիտելիքներ շատ ունեն»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

> ***«Հետո փողերն էլ են բերել Հայաստան, ինչը ևս շատ լավ է: Իրենց գալով անշարժ գույքի շուկայում գների աճ է գրանցվել: Եթե մինչև էդ իրադարձությունները ես պատրաստվում էի տուն գնել այլ բյուջեով, հիմա ես իմ բյուջեն պիտի վերանայեմ, քանի որ գները զգալիորեն աճել են: Նույնն էլ վարձակալությունն է, որը 5-6 անգամ աճել է: Հիմա եթե ցանկանում ես տուն վարձել, նվազագույնը 700$ գումար է 2 սենյակը, որը նախկինում կարող էիր ձեռք բերել 100-150 հազար դրամով»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, Երևան***

> *«Իրանք որ էկան, մեր հայերի մի հատ վատ հատկություն ևս բացահայտվեց, որ կարողացան մարդկանց իրանց ընտանիքներով վարձով տանից հանեն, շպրտեն դուրս, թողել փողոցում, ինչ է թե ռուս է եկել ու պատրաստ են կրկնակի վճարել, մանավանդ, որ դրանից առաջ արցախցիներ էին եկել ու շատ վատ վիճակում էին»:*
> *Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան*

Հանրային ընկալումներում առկա է նաև հիմնականում զգացմունքային արձագանք՝ նույն ֆիզիկական և սոցիալական տարածության մեջ հավաքական «ռուսների» սովորականից էապես մեծ քանակի հայտնվելու հետ կապված: Այդ արձագանքը բաժանվել է երկու մասի՝ դրական և բացասական: Երիտասարդների դրական զգացմունքայնությունը կապվում է հավաքական «ռուսների» էսթետիկ, կիրթ լինելու հետ.

> *«Այո, հիմա իրանք կաֆեներում, առաքման ծառայություններում շատ կան ռուսներ ու շատ լավ են սպասարկում»:*
> *Ի.ս, 18-25 տ. խումբ, Երևան*

> *«Ես կարծում եմ, որ ռուսները մեր քաղաք բերեցին շատ բաներ, օրինակ, տարբեր մասնագիտությունների պահանջարկի աճ, հետո նրանք բացում են իրենց ձեռնարկատիրությունները, նոր սրճարաններ են բացվում իրենց կողմից, բլոգերություն են անում ու այնպիսի տեղեր են ինստագրամյան էջերով բացահայտում, որոնց մասին մենք երբեք չենք լսել: Ու դրանք շատ հետաքրքիր, կուլտուրական տեղեր են, նաև թանգարաններ կան այդ ցանկում: Անգամ Երևանի շրջակայքում գտնվող օբյեկտների մասին բացահայտումներ անում են: Դրանից բացի՝ նրանք նպաստում են, որ Հայաստանում բարձրանա ռուսերեն լեզվի իմացության մակարդակը, որը զարգացում է ենթադրում իր հերթին ինչպես մարդկանց, այնպես էլ երկրի մակարդակով: Ես նոր ընկերներ եմ ձեռք բերել: Ճիշտ է, նրանք շատ են հայհոյում, բայց ժամանակի հետ իրենք կհասկանան, որ էստեղ ուրիշ ձև է և ընդունված չէ հայհոյելով խոսալը: Բայց ես՝ որպես Ռուսաստանում ապրած աղջիկ, կարող եմ ասել, որ իրենք էստեղ ավելի լավ են իրենց պահում, ավելի զուսպ, քան Ռուսաստանում»:*
> *Ի.ս., 18-25 տ. խումբ, Երևան*

Երիտասարդների բացասական արձագանքները Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ընթացքում Հայաստան եկածների վերաբերյալ կապված են մեզ համար ընդունված վարքականոններից նորեկների տարբերվելու, այդ կանոնները խախտելու հետ: Հնչել են նաև ակնհայտ զգացմունքային-ազգայնական կարծիքներ, որոնք նույն կերպով կարելի էր վերագրել նաև մինչ պատերազմը դեպի Ռուսաստան և Ուկրաինա արտագաղթած հարյուր հազարավոր հայերի վարքի մասին, որը, սակայն, ֆոկուս-խմբային քննարկումներում չի նշվել: Չտարբերելով ռուսներին և ուկրաինացիներին՝ նրանց բոլորի հանդեպ բացասական կարծիքներ հայտնած որոշ երիտասարդներ խոսել են տանտերերի դիրքերից՝ նորեկներին կախյալ կարգավիճակում տեսնելով:

> *«Իմ ներվերի վրա ազդում են ռուսները մեր փողոցներում: Իրանք քայլում են մեր փողոցներում, խոսում են ռուսերեն, ոչ մի ձևով չեն ինտեգրվելու, եթե անձնային մակարդակում շփում չկա, ոչ մի բան իրանցից չենք վերցնելու, իրանք դեկորատիվ քայլում են մեր փողոցներում, ու չգիտեմ, թե ինչի են ազդում իմ ներվերի վրա»:*
> *Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան*

> *«Իրանք ազդում են իմ վրա, քանի որ իրանց զգում են այնպես, ինչպես իրանց սեփական տանը: Ես իմ երեխայի հետ գնում եմ ու տեսնում եմ իրանց տռուսիկ հագած շորտիկը, ու դա ինձ հաճելի չի: Նա չի հարգում իմ երկրի ադաթները: Օրինակ, մեր կուլտուրայում չկա այգու մեջ գարեջուր խմել: Հիմա տեսնում ենք՝ նստում են սկամեյկային, գարեջուրը խմում են, շիշն էլ թողում ու գնում են»:*
> *Ի.ս, 26-35 տ. խումբ, Երևան*

> *«Ես վիդեո եմ տեսել, որ գնացել էին Խոր Վիրապ ու իրանց շատ փնթի էին պահել, չեմ կարող ասել ուկրաինացի էին, թե ռուս»:*
> *Ա.ս, 26-35 տ. խումբ, Երևան*

Պետք է նշել նաև, որ այս պատերազմի ընթացքում Հայաստան ներգաղթածների հետ միասին ներբերված նոր մշակույթն իրականության մասին այլընտրանքային տեսանկյուն է ստեղծում, մտածելու տեղիք է տալիս, որը հայաստանցի երիտասարդների մոտ և՛ հետաքրքրություն, և՛ անհանգստություն է ստեղծում: Այս իմաստով հետաքրքրական է հետևյալ օրինակը.

> *«Մշակույթի մեջ էլ են փոփոխություն բերել: Երևի բոլոր հայերը արդեն հետևում են տելեգրամյան ալիքին՝ Настя, это где? Էդ բլոգերը տարբեր տեղեր է գնում, որ էսքան տարի Հայաստանում ապրելով՝ մենք չգիտեինք դրա մասին: Էդ ալիքի միջոցով նաև մի քանի մշակութային բաների բախվեցի, ժամանակակից թատրոններ են հիմնել, ներկայացումներ են խաղում, որոնք որ ֆորմատով և բովանդակությամբ ընդհանրապես հայ հանդիսատեսի համար չեմ, կոնկրետ ես գնացել եմ «Черешневый сад» ներկայացմանը, որի կարմիր թելը ռուս-ուկրաինական պատերազմն էր, որ մի աղջկա ճակատագրի միջոցով փորձում էին էդ ամեն ինչը ներկայացնել: Այդտեղ լայվ վիճակում մի աղջիկ հանվում է ու հանդիսատեսի մոտ շատ մոտիկ ռակուրսից է հայտնվում, հետո մեզ են նկարում, մեր շոկահար դեմքերը էդ տեսարանի ժամանակ, իսկ բեքգրաունդում ականջակալներով 18+ ձայներ ես լսում և այլն: Ինչ-որ առումով էդ վատ պրոպագանդայից ես վախենում եմ, քանի որ կա՛մ մենք պատրաստ չենք էդ արվեստին մոտենալ, կամ էլ դա արվեստ չի: Մյուս կողմից էլ նկատել եմ, որ քանի որ ռուս աղջիկները լավ բաց են հագնվում, դա մեր աղջիկներին ռիսկ է հաղորդում»:*
> *Ա.ս, 26-35 տ. խումբ, Երևան*

Հայաստանի անվտանգությունը, շահերը, անհրաժեշտ դիրքորոշումը այդ պատերազմի պայմաններում

Ֆոկուս-խմբային քննարկումների հիմնական թեմաներից էր Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի վերաբերյալ Հայաստանի անհրաժեշտ դիրքորոշումը: Երիտասարդների կարծիքով՝ այն չեզոք է:

> *«Մեր պաշտոնական դիրքորոշումն այն է, որ մենք Ռ.-ի հետ համախոհ ենք, բայց Ու.-ին էդքան վատ չենք վերաբերվում, չեզոք ենք:*
> *Ա.ս., 26-35 տ. խումբ, Երևան*

> *«Մեր պետական դիրքորոշումը մաքսիմալ չեզոք է: Մի քիչ ցույց են տալիս, որ ռուսամետ են, բայց մաքսիմալ չեզոք են»:*
> *Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան*

Հայաստանը չպետք է շահագրգռված լինի նաև Ռուսաստանի հնարավոր պարտությամբ, քանի որ Ռուսաստանի թուլացումը կնպաստի տարածաշրջանի մյուս պետությունների, այդ թվում՝ հակահայկական քաղաքականություն վարող Թուրքիայի և Ադրբեջանի դիրքերի

ուժեղացմանը:

> *«Ինչքանո՞վ ենք մենք պատրաստ տարածաշրջանում ունենալու Թուրքիայի նման հարևան՝ առանց ուժեղ Ռուսաստանի»:*
> *Ի.ս.,18-25 տ. խումբ, Երևան*

> *«Հետո քանի որ ռուսական զորքերը պահում են մեր սահմանները, ոչ խելամիտ քայլ կլինի իր դեմ դուրս գալը»:*
> *Ի.ս.,18-25 տ. խումբ, Երևան*

> *«Ես գտնում եմ, որ էս կոնֆլիկտում Ուկրաինան ավելի ճիշտ է, բայց քանի որ Ռուսաստանը մեր կողքը կանգնած չլինի, մենք ավելի մեծ պրոբլեմների կբախվենք, դրա համար պիտի Ռուսաստանին աջակցենք, ինչքանով էլ որ նա սխալ է»:*
> *Ա.ս., 26-35 տ. խումբ, Երևան*

Ուկրաինայում ընթացող պատերազմում Ռուսաստանի պարտությունը, երիտասարդների կարծիքով, կարող է իրավիճակային լինել, սակայն ամբողջական պարտությունը դժվար կանխատեսելի է:

> *«Եթե հաղթեց Ուկրաինան, ուրեմն հաղթեց ԱՄՆ-ն և Ռուսաստանի ազդեցությունը ինչ-որ չափով կթուլանա: Բայց նա շատ հզոր է վերանալու համար, անգամ այս սանկցիաներն իր վրա չեն ազդում: Նույնիսկ Եվրոպան ինչ-որ տեղ իրեն է թուլացնում, որ շատ բիզնեսներ փակում է, հանում է, իսկ Ռուսաստանը կարողանում է դրա տակից էնպես դուրս գա, որ իր վրա մասշտաբային չազդի: Դրա համար ինչքան էլ Ռուսաստանը թուլանա, միևնույն է՝ իր ազդեցությունը մնալու է տարածաշրջանում»:*
> *Ի.ս.,18-25 տ. խումբ, Երևան*

> *«Եթե Ռուսաստանը պարտվի, ըստ իս, իրան որպես գերտերություն, որ ընկալում էին, որպես լուրջ գերտերություն հզոր բանակով, իր իմիջը աշխարհում կընկնի, նաև տարածաշրջանում կընկնի: Դա կբերի նրան, որ Ադրբեջանի կողմից ձեռնարկվող ագրեսիան ավելի կմեծանա ու ախորժակը կմեծանա Հայաստանի հետ կապված, քանի որ իրան զսպող ոչ մի բան չի լինի: Ինձ թվում է, որ Ռուսաստանը պարտվի, շատ ավելի ծանր հետևանքներ կունենանք մենք՝ հայերս»:*
> *Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան*

Երիտասարդների կարծիքով՝ դժվար է զուգահեռներ անցկացնել Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի և Ղարաբաղյան հակամարտությունների միջև: Ոմանք փորձեցին նմանություն տեսնել պատերազմող և իր տարածքները պաշտպանող Ուկրաինայի և Հայաստանի միջև, ոմանք այդ նմանությունը հերքեցին, քանի որ, իրենց կարծիքով, Հայաստանին 2020թ. պատերազմում ոչ ոք չէր աջակցում, իսկ Ուկրաինային աջակցում են բոլոր արևմտյան երկրները:

> *«Եթե ավելի պրիմիտիվ նայենք, էդ կոնֆլիկտում մի կողմը կռվում է իր հայրենիքը պահելու (Ուկրաինա), իսկ երկրորդ կողմը՝ մյուսի հայրենիքը գրավելու համար: Նույնն էլ մեր դեպքում է՝ մենք կռվում ենք մեր պատմական տարածքները, սուվերենությունը պահելու համար, իսկ Ադրբեջանը՝ նոր տարածքներ կամ իրանց հորինած տարածքները զավթելու համար»:*
> *Ի.ս.,18-25 տ. խումբ, Երևան*

Բացի դրանից՝ նշվեց Ուկրաինայի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կարգավիճակների տարբերություն. եթե Ուկրաինան պաշտպանում է իր տարածքային

ամբողջականությունը, ապա ԼՂ-ի ժողովուրդը պաշտպանում էր իր ինքնորոշման իրավունքը. այս իմաստով Լեռնային Ղարաբաղի չճանաչված հանրապետությունն ավելի շատ նմանվում է Ուկրաինայի կազմից դուրս գալու և Ռուսաստանի կազմի մեջ մտնելու ցանկություն ունեցող մարզերին:

> ***«Միջազգային իրավունքի տեսանկյունից Ուկրաինան իր սահմաններով առանձին իշխանություն ունեցող պետություն է, իսկ Արցախը իր սահմաններով՝ որպես պետություն, միջազգայնորեն ընդունված չէ, ուղղակի ինքը Հայաստան է, և այդտեղ ազգերի ինքնորոշման հարց կար և այլ էր, քան Ուկրաինայի կռիվը»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Ապագայի վերաբերյալ երիտասարդների կանխատեսումները

Ֆոկուս-խմբային քննարկումներում ապագայի մասին տարաբնույթ կանխատեսումներ են հնչել՝ խիստ հոռետեսականից մինչև լավատեսական: Կարելի է նկատել, որ եթե հոռետեսական կանխատեսումները մեծամասնական են և պայմանավորված են և՛ տարածաշրջանային քաղաքական գործընթացներով, և՛ Հայաստանի ներքաղաքական իրավիճակով, ապա լավատեսականները սակավաթիվ էին և ոչ միշտ փաստարկված.

> ***«Հայաստանը լինելու է Մոնակոյի պես luxury երկիր: Բոլոր աշխարհներից գալու են Հայաստանով անցնեն: Հայաստանը կլինի հարուստ երկիր»:***
> ***Ա.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

> ***«Հայաստանի վիճակը մի քանի տարուց շատ լավ է լինելու, հիմա էլ վատ չի Հայաստանի վիճակը, ուղղակի եթե պատերազմ չլիներ, ավելի լավ կլիներ: Էս պահի դրությամբ Հայաստանը ունի նորմալ ոստիկանություն, կայուն էկոնոմիկա, ունենք հանքեր, ջուր և այլ հնարավորություններ, ունենք սարքած ճանապարհներ, պատրուլ ունենք»:***
> ***Ա.ս.,18-25 տ. խումբ, Երևան***

Հոռետեսական կանխատեսումներն առաջին հերթին վերաբերում են Ղարաբաղյան չլուծված հակամարտությանը, Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի դեմ հերթական ռազմական գործողությունների նախապատրաստման ծրագրերին, տարածաշրջանում հակասությունների սրմանը, այնուհետև միայն՝ ռուս-ուկրաինական հակամարտությանը: Այդ ամենը երիտասարդները ցուցադրում են՝նաև իրենց անձնական կյանքի անպաշտպանության, վախերի, անորոշության մասին խոսելով.

> ***«Դու չես կարող վստահ լինել, որ դու քո երկրում ապահով ես, վստահ լինես, որ եթե տուն սարքեցիր, տուն առար, էդ տունդ կլինի մի քանի օրից, ոչ թե կսկսվի ինչ-որ պատերազմ: Վայրկյանների հարց է, որ Հայաստանը կարող է շրջվի ու էլ չլինի: Դա կախված է հիմնականում մյուս երկրներից: Հայաստանի հիմիկվա իշխանությունը ուժեղ չի, գլխավոր որոշումները Հայաստանի ապագայի հետ կապված կախված են մյուս երկրների շահերից, ինքնիշխան չէ»:***
> ***Ի.ս.,18-25 տ. խումբ, Երևան***

> ***«Անկեղծ ասած, հիմա ես ապագա չեմ տեսնում Հայաստանի համար, որը ինձ համար շատ ցավոտ է: Մենք ամեն օր արթնանում ենք, լուրերը նայում ենք, տեսնում ենք, որ վիրավոր է եղել, զոհ է եղել, ու դա անընդհատ է»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Երիտասարդների կողմից նշվել են 2020 թ. պատերազմի հետևանքներով առաջացած իրողությունները, որոնք վտանգավոր են Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ապագայի

համար: Տարածաշրջանի ապաշրջափակման ծրագրերն այդ իմաստով ոչ միայն հույսեր չեն ներշնչում, այլև խիստ մտահոգիչ են.

> ***«Լավ ապագա չեմ տեսնում, եթե միջանցքը տրվի, և մենք կդառնանք Սիրիայի հյուսիսը, այսինքն՝ Էնքան ահաբեկչությունները կշատանան, որ մարդիկ ինքնակամ դուրս կգան էդ տարածքից, որտեղով անցնում է էդ ճանապարհը: Բայց դա ամենավատ սցենարն է»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, Երևան***

Ապագայի հանդեպ երիտասարդների հոռետեսական կանխատեսումները կապված են նաև Հայաստանի ներքաղաքական իրավիճակի, այդ թվում՝ իրավունքների և ազատությունների սահմանափակման, ժողովրդավարության հանդեպ ներքաղաքական սպառնալիքների, հասարակության մեջ տարածված թշնամանքի, ատելության հետ, որը նույնպես հանգեցնում է արտաքին-քաղաքական պարտությունների և կորուստների.

> ***«Իմ համար Հայաստանը ժողովրդավար պետություն չէ, չի էլ դարձել: Ավտորիտարիզմը մնում է, ու գնալով կարող ենք վերածվել տոտալիտարի, քանի որ գնալով այնպիսի օրենքներ են ընդունվում, որ ես չեմ կարծում, որ ժողովրդավար պետությունում նման բան լինում է: Օրինակ՝ հայհոյանքը: Կամ օրինակ, վարչապետին կից մի շարք կառույցներ են ստեղծվելու, օրինակ, ազգային գվարդիան, որը կլինի ուժային կառույց և կպաշտպանի անհատական, անձնական, ֆիզիկական գոյությունը: Բացի այդ՝ պետությունում համակարգը գնալով փլուզվում է, ու որ ամեն մարդու նշանակում են գենշտաբի պետ, կամ կես տարով չես նշանակում գենշտաբի պետ, կամ ինչ-որ պատմաբան է դառնում ՊՆ նախարար, կամ եթե էդ ոլորտի հետ չառնչվող մարդը դառնում է ոլորտը ղեկավարող»:***
> ***Ի.ս.,18-25 տ. խումբ, Երևան***

> ***«Ինձ թվում է, եթե էս իշխանությունը մնա, մի տարի հետո էլի մեր հողերը կպակասեն»:***
> ***Ա.ս,18-25 տ. խումբ, Երևան***
> ***«Եթե մեր ազգի մեծամասնությունը էլի նույն իշխանությանը ընտրի, ոչ մի լավ բանի չի հասնի»:***
> ***Ի.ս, 26-35 տ. խումբ, Երևան***

Ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքները՝ մարզաբնակ երիտասարդների հետ

Մարզաբնակ երիտասարդների հետ ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքների վերլուծությունը ներկայացվում է ըստ մարզային քաղաքների և գյուղերի բնակիչների ենթախմբերի, որը թույլ է տվել համեմատել մարզաբնակ քաղաքաբնակների և գյուղաբնակների պատկերացումները այդ ենթախմբերի ներսում, ինչպես նաև միմյանց հետ: Բացի դրանից՝ համեմատվել են նաև մարզաբնակ քաղաքաբնակների և գյուղաբնակների պատկերացումներն ըստ բնակավայրի՝ Ադրբեջանին ու Թուրքիային սահմանամերձ և նրանց հետ սահմանից հեռու լինելու սկզբունքի, որը կարող էր պայմանավորել բնակիչների անվտանգային պատկերացումների, մտավախությունների, իրենց կողմից դիտվող փաստացի իրավիճակների առանձնահատկությունները: Համեմատությունը ոչ միայն աննշան առանձնահատկություններ է ցույց տվել մարզերի քաղաքաբնակ և գյուղաբնակ երիտասարդների պատկերացումներում, այլ նաև որոշ հարցերում՝ էական նմանություններ երևանաբնակ երիտասարդների կարծիքների հետ: ՀՀ մարզերի քաղաքներում և գյուղերում բնակվող երիտասարդների կարծիքների նմանությունը պայմանավորված է վերջին տարիներին հայաստանյան հասարակության համար կարևոր իրադարձությունների գրեթե հավասար ազդեցությամբ Հայաստանի բոլոր բնակավայրերի համար. 2018թ. «Թավշյա հեղափոխության» հետևանքով փոփոխվեց և՛ կենտրոնական, և՛ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար անձնակազմը, իսկ 2020թ. ղարաբաղյան պատերազմին մասնակցել են ՀՀ բոլոր մարզերի բնակիչները (առաջին հերթին՝ զորակոչված երիտասարդները), որոնց հարազատներն ու բարեկամներն ուղղակի և անուղղակի կերպով առնչվել են պատերազմի ընթացքին և շարունակաբար առնչվում են դրա հետևանքներին: ՀՀ մարզերի քաղաքներում և գյուղերում բնակվողների պատկերացումները քիչ թե շատ տարբերվում են այն հարցերում, որոնք վերաբերում են 2022 թ. Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ընթացքում Հայաստան տեղափոխվածներին. եթե երևանցիներն ու որոշ մասով ՀՀ առանձին այլ քաղաքների բնակիչները նորեկներին առնչվում են ուղղակիորեն և, համապատասխանաբար, կարծիք են հայտնում՝ ելնելով սեփական փորձից, ապա ՀՀ որոշ մարզային քաղաքների և հատկապես գյուղերի բնակիչները Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ընթացքում Հայաստան տեղափոխված «ռուսների» (ընդհանրացված, կարծրատիպային և առավել հաճախ օգտագործվող անվանում) մասին խոսում են միջնորդավորված կերպով՝ ըստ Երևանում և մարզկենտրոններում բնակվող իրենց հարազատների տպավորությունների: Վերլուծության մեջ քաղաքաբնակների ու գյուղաբնակների պատկերացումների առանձնահատկությունների առկայության դեպքում դրանք կընդծվեն, ինչպես նաև կառանձնացվեն երիտասարդների կարծիքներից արվող մեջբերումների միջոցով:

Վերջին տարիներին Հայաստանում գրանցված փոփոխությունները, գործընթացներն ու միտումները

Խոսելով վերջին տարիների մասին՝ երիտասարդներն առանձնացնում են երեք ժամանակահատված. մինչև 2018թ. «Թավշյա հեղափոխությունը», դրանից հետո մինչև 2020թ. ղարաբաղյան պատերազմն ու ներկան:

Գրեթե բոլոր խմբային քննարկումներում մասնակիցները նկարագրել են 2018թ. «Թավշյա հեղափոխությունը»՝ որպես յուրահատուկ «ազատագրում». ավելի ազատ սկսեցին ապրել, գործարար հարաբերություններն ու նոր ծրագրերի ներդրումներն այլևս կախված չէին պետական վարչակարգի, կլանների, առանձին իշխող անհատների շահերից, ազդեցությունից, սահմանափակումներից:

> *«Հեղափոխությունից հետո շատ զգալիորեն նկատվեց մարդկանց ազատությունը այստեղ, դա շատ նկատելի էր, ժամանակին այստեղ ամեն մարդ իրավունք չուներ շինարարություն աներ, սահմանափակումներ կային, մարդիկ վախի մթնոլորտում էին ապրում, ինչ-որ մի տեղ, խոսքը անվտանգայինի մասին չի, էդ պահը անցավ 2018 թվականից հետո Սյունիքում՝ հատկապես Գորիսում, սկսվեց լայն շինարարություններ, մարդիկ ի զարմաս մեզ մինչև երեկոյան 10-ը զբոսնում էին քաղաքում, որը ընդունված չէր, ազատությունը մարդկանց մեջ ահավոր նկատելի էր: Դա ակնհայտ երևում էր առաջին տարում»:*
> *Ի.ս., 18-35 տ. խումբ, ք. Գորիս*

> *«Մեր ժողովուրդն իրար սիրել է երևի 2 անգամ՝ 90-ականների պատերազմի հաղթանակից հետո, և 2018-ին, երբ ժողովուրդը թվացյալ կամ իրականում ինչ-որ բան փոխեց: Ես այդ ժամանակ եմ տեսել մարդկանց ժպտալուց, էլ չեմ տեսել»:*
> *Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Գյումրի*

Խմբային քննարկումներից մեկում նաև նշվել են դպրոցական կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները, որոնք մասնակիցները դրական են գնահատել.

> *«Միակ դրական փոփոխությունը՝ ուսուցիչների վերջին ատեստավորման ընթացակարգը, որը իսկապես ինձ համար շատ գովելի ա, որովհետև կրթական համակարգը ու դպրոցը առավել ևս այն հիմքն է, որտեղից մեր երեխաները պետք է սովորեն ու դառնան պիտանի մեր հասարակության, պետության համար: Ես կարծում եմ, որ էդ նախաձեռնությունը, որ հիմա կամային բնույթ ունի, պիտի դարձնեն պարտադիր: Նամանավանդ ծնողների կողմից դա գնահատվում է շատ դրական»:*
> *Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Մարտունի*

Մեկ այլ խմբային քննարկման ժամանակ կրթական համակարգի բարեփոխումները համարվեցին ազգային արժեքներին սպառնալիք. ըստ Վայքում կազմակերպված քննարկման՝ կրթական ծրագրերն ուզում են դարձնել «ավելի ժողովրդավար», օրինակ, դպրոցական ծրագրերում մտցվում է սեռական դաստիարակությունը, նախատեսվում է հաջորդ տարիներին 18+ գրականություն ներառել կրթական հաստատություններում, իսկ հայոց լեզվի դասավանդման ժամերը կրճատվում են: Բուհերի խոշորացում է տեղի ունենում: Կրթական համակարգը տանում են կործանման (26-35 տարիքային խումբ, ք. Վայք):

Ըստ մարզաբնակ երիտասարդների՝ իրավիճակը վատթարացավ ներքաղաքական և արտաքին-քաղաքական գործընթացների՝ կոնֆլիկտայնության, անվտանգային սպառնալիքների, անարդյունավետ որոշումների ընդունման հետևանքով: 2018թ.-ից հետո Հայաստանը ձգտում էր լինել ավելի ժողովրդավարական, «Թավշյա հեղափոխությունից» հետո առաջին տարում «ժողովրդավարություն նկատվում էր», սակայն մեկ տարի անց գործընթացը հակաժողովրդավարական դարձավ: Երիտասարդների մոտ նկատելի է հիասթափվածություն հետհեղափոխական իշխանությունների գործելաոճից, մոտեցումներից. հատկապես գյուղաբնակ երիտասարդությունն է մատնանշում գիտելիքների, մասնագիտական մոտեցումների պակասությունը հետհեղափոխական կառավարման ոլորտում.

> *«Օրինակ՝ մինչև 2018 թվականի իշխանափոխությունը բոլորս ուղղակի ասում էինք, որ ներկայիս իշխանությունը լավը չէ, թող նորերը գան, կոնկրետ ես ծառայության էի, եթե ես էլ ստեղ լինեի, ես էլ կհելնեի ցույց կանեի, որովհետև տենց խորին վերլուծում չէի արել, բայց հիմա հասկանում եմ, որ ամեն քաղաքացի պետք ա իրա պատմությունը իմանա, իմանա ինչ ա կատարվում, վերլուծի, ու նոր որոշում կայացնի. ներկայիս իշխանությունները ամեն ինչ տանում են դեպի վատը»:*
> *Ա.ս., 18-35 տ. խումբ, գ. Գետաշեն*

2020թ. ղարաբաղյան պատերազմի, դրա ծանր հետևանքների, սեփական ընտանիքի, այդ մասին հարազատների օրինակներով խոսելը հավասարապես բնութագրական է և՛ սահմանամերձ գոտու բնակիչ երիտասարդների, և՛ Հայաստանի այլ մարզերում բնակվողների համար: Պատերազմը անվերադարձ փոխեց նրանց կյանքը, դրանով է պայմանավորված այլ հարցերի մասին նրանց տեսանկյունը:

> ***«Իսկ մեր երկրում վերջին իրադարձություններին գումարվեց 44-օրյա պատերազմը, որը կատաստրոֆիկ էր հոգեբանական տեսանկյունից, ամեն անգամ, երբ ես հեռուստատեսությամբ լսում էի էդ անունները, ու էդ երաժշտությունը իսկապես ես զգացել եմ, որ ինձ մոտ հոգեբանական խիստ հուզումնալից վիճակ առաջանար, նաև այդ հոգեբանական գերճնշված վիճակը կարող էր մարդկանց տանել անգործության, անփութության, մարդիկ սկսում են ուրիշ ձև նայել կյանքին»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Մարտունի***

> ***«Էս պատերազմը զգացել եմ երևի 2021 թվականի հունվարից սկսած, երբ ես ուղղակի գիտակցում էի, թե ինչքան շատ են իմ կողքի կորուստները ու կորուստ կրած մարդիկ, որոնք իմ համար իրոք թանկ են»:***
> ***Ի.ս., 18-35 տ. խումբ, ք. Հրազդան***

Մարզաբնակ երիտասարդները շարունակում են վերապրել պատերազմի հետևանքները, պատկերները. հատկապես սահմանամերձ շրջանների բնակիչներն ապրում են մշտական տագնապի պայմաններում: Խոսելով իրենց ապրումների, ծանր հիշողությունների և բացասական սպասումների մասին՝ մարզաբնակները նաև նշում են, որ Երևանում այդ ամենը իրենց պես չեն զգում, չեն ընկալում, համապատասխանաբար՝ ՀՀ կառավարության գործելակերպը հատկապես սահմանամերձ մարզերի պաշտպանության առումով հասցեական չէ.

> ***«Իրանք չեն տեսել,[3] կոնկրետ մենք զգացել ենք, որ մեր տունը մի վայրկյանում փլվի, ու մենք կանգնենք զրոյի մոտ, ինչպես 2020 թվականի պատերազմին եղավ, շատ մարդիկ կորցրեցին իրենց բիզնեսը, իրենց եկամուտը, իրենց հացի միակ միջոցը»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս***

> ***«Էն որ Երևանի Կասկադում նստածը ասում ա՝ հա ինչ անենք, Վայոց Ձորն ու Սյունիքը ինձանից հեռու ա, չարաչար իրանք սխալվում են, տենց բան չկա»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Վայք***

> ***«Նամանավանդ մենք ու էն մարդիկ, ովքեր զգացել են էդ ԱԹՍ կոչվածի աղմուկը, սեպտեմբերի 12-ի գիշերը [որը ընկել է Մարտունիում], մենակ էդ ձայնը հերիք ա, որ դու ամեն ինչ տաս ու երազես, որ երբեք էդ ձայնը այլևս չլսես»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Մարտունի***

Հետաքրքիր է նկատել, որ եթե ներքաղաքական մակարդակում հասարակության ներկայացուցիչները բաժանվեցին մարտնչող և միմյանց խոչընդոտող ճամբարների, ապա առօրյա կյանքում դրսևորվել են մարդկային կարևոր դրական որակներ՝ փոխաջակցությունը, փոխադարձ ուշադրությունը, հոգատարությունը, միասնականությունը: Քանի որ այդ մասին են խոսել հենց մարզաբնակները, այդ հարաբերությունների կայունությունն ու արժևորումը կարելի է հատկապես վերագրել ոչ այնքան մայրաքաղաքի, որքան հենց մարզերի բնակիչներին:

3 Երևանաբնակները (խմբ.):

«Կրակոցների ժամանակ եթե մեկը ուներ անվտանգ պադվալ, լիքը մարդ գալիս էր էդ պադվալ էդ գիշերը, բայց քովիդի ժամանակ ավելի քիչ էր շփումը, օրինակ, մենք մեր հարևանների հետ գրեթե երկու տարի ընդհանրապես չէինք շփվում, իսկ պատերազմի ժամանակ իրանք էին զանգում, հարցնում էին՝ ինչ վիճակ ա և այլն, այսինքն՝ փորձը ցույց տվեց, որ նորից մտերմություն մտավ էդ ընթացքում, չեմ ասում նույն ձև շարունակվում ա, բայց էդ օրերին էդպես էր»:
Ի.ս., 18-35 տ. խումբ, ք. Գորիս

«Ես իմ բարեկամների հետ քիչ էի շփվում, բայց պատերազմից հետո ավելի շատ եմ ուզում իմանամ ոնց են, որովհետև մինչև էդ երևի չէի մտածում, որ կարաս կորցնես եղբորդ, կամ այլ մարդու, ու երբ որ իրենք ռազմաճակատում են, էդ ժամանակ հասկանում ես, որ իրենք քո համար ավելի կարևոր են, բոլորի համար ավելի սրտացավ ես դարձել»:
Ի.ս., 18-35 տ. խումբ, ք. Գորիս

«Պատերազմից հետո մենք բոլորս էլ մեր ժամանակն ենք սկսում գնահատել, վախենում ենք կորցնել, դրա համար լավ բաներ էլ ա թողնում, որ մենք ինքներս մեզ, դիմացինի զգացմունքները թեկուզ կարողանանք գնահատել ու հարգել»:
Ի.ս., 18-35 տ. խումբ, ք. Հրազդան

Հետպատերազմյան վիճակը հատկապես մարզաբնակների համար ստեղծել է ընկճվածության, ապագայի անորոշության, ամեն ինչի, այդ թվում՝ ուսման անիմաստության զգացումներ, որոնց պատճառով երիտասարդներն ապամոտիվացված են.

«Մարդիկ հիմա չգիտեն, մտածում են՝ արժե ինչ-որ բան անել, արժե ինչ-որ բան էստեղ ստեղծել, էդ անտարբեր վիճակից մարդիկ ոնց որ զոմբիացած գնան գործի, գան տուն, հաց ուտեն, քնեն ու նորից գնան գործի... էս պահին անտարբեր վիճակ ա մեր հասարակության մեջ, գրեթե բոլոր տեղերում էդպես ա»:
Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս

«Ավելի հեռանկարային ծրագրեր չենք ունենում էստեղի հետ կապված, որովհետև չենք իմանում վաղը էստեղ կլինենք, թե չենք լինի: Կամ ինչ կլինի ընդհանրապես»:
Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս

«Մի հատ թեզ կար, ես դա շուտ էի կարդացել, ասում ա՝ մարդիկ չեն կարող մշտական երազանքներ ունենալ, երբ նրանք ապրում են կոնֆլիկտային տարածաշրջանում, այսինքն՝ իմ համար երազանք բառն էլ ա երազանք դարձել: Երբ որ դու անձնական երազանքներ ունես, էդ պատերազմից հետո տենց բաներ մտածելը ոնց որ քեզ մեղավոր ես զգում, որ ինչ-որ բան ուզում ես քո համար, բայց միտեսակ մեղավոր ես զգում քեզ, որ ինչ-որ բան ես ուզում քեզ համար»:
Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Վանաձոր

Բոլոր քննարկումներում երիտասարդների մի մասի մոտ նկատվել է երկարաժամկետ պլանավորման բացակայություն. անհնար է մտածել մի քանի ամիս հետո հնարավոր պլանների մասին, քանի որ «ամեն ինչ խարխուլ է»: Սա, իր հերթին, «կոտրում» է մարդկանց, նրանք այլևս չգիտեն՝ արդյո՞ք արժե գումար ծախսել, օրինակ, տուն վերանորոգելու համար, թե՞ պահել այդ գումարը, քանի որ այն կարող է պետք գալ երկրից փախչելու ժամանակ: Ցավով նշվում է, որ որոշ ժամանակ անց նորից հայտնվելով կյանքի «թմբիրի մեջ»՝ հարմարվում են ստեղծված իրավիճակին ու, կարծես, ապրում աննպատակ: Մարդն ու մարդկային կյանքը, որ արժեք էր, դարձել է անարժեք, իսկ զոհերը՝ սովորական երևույթ:

> ***«Մարդկանց մտածելակերպն ա փոխվել, ուրիշ ձև են մտածում, մարդիկ պատերազմից հետո ոնց որ ամեն ինչից հոգնած են: Ես կորցրել եմ իմ եղբորը 44-օրյա պատերազմի ժամանակ և հպարտ եմ նրա գործունեության համար, և տխուր եմ, որ նա իմ կողքին չի հիմա, ցավ կա, բայց որ սենց նայում եմ, մամայի հետ խոսում եմ, մաման ասում ա՝ դե լավ դե, պիտի շնորհակալ լինենք, որ էսօր արթնացանք, հիմա շատ հնարավոր ա քնենք ու չարթնանանք»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Մարտունի***

> ***«Առաջ երբ մեկին մաղթանք էին ասում, ասում էին առողջություն, երջանկություն, ոնց որ օդի մեջ ասված խոսքեր, շաբլոն խոսքեր լիներ, բայց հիմա էն որ դու ասում ես, իրոք դու դիմացինին ի սրտե մաղթում ես առողջություն, որովհետև էսօր իրոք ոչ մեկ առողջություն չունի՝ վերցրած մեր բալիկներից»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, գ. Ալաշկերտ***

Գյուղաբնակների մոտ ապագայի հանդեպ անորոշության զգացումը, անտարբերությունն ու ապակողմնորոշվածությունը դրսևորվում են իրենց հիմնական զբաղվածության՝ հողագործության պակաս կարևորմամբ, գործելակերպի և դրանով նաև կենսակերպի փոփոխման միտումներով.

> ***«Օրինակ՝ էն ժամանակ մարդիկ հողատարածքները վերցնում, մշակում էին, իսկ հիմա փնտրում են ավելի հեշտ ճանապարհներ, Ռուսաստան էթալ, աշխատելը կամ քաղաքում մի փոքր աշխատանք գտնելը, այսինքն՝ էնպիսի աշխատանք, որը կապված չի հողագործության հետ, հիմնական պատճառը պատերազմը դրան հանգեցրեց, մարդը հասկացավ, որ ինքը տարածքը կորցնում ա արդեն, ինքը էլ չի ուզում իր տարածքի վրա ինչ-որ բան դնի սարքի, մտածում ենք արդյոք մերը կլինի էս տարածքը որոշակի ժամանակ հետո, թե չէ»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, գ. Գետաշեն***

Պատերազմում պարտության, կորուստների, ներքաղաքային լարվածության պայմաններում առաջ եկած անտարբերությունը՝ ապատիան, դրսևորվում է ոչ միայն քաղաքականության, այլև առօրյա կյանքում տեղի ունեցող բացասական երևույթներին չարձագանքելու, դրանք անտեսելու, անգամ՝ ընդունելու առումով.

> ***«Հասարակության մեջ արդեն ուրիշ բարքեր ա նորմալ դարձել, օրինակ, թմրանյութերը: Այն ժամանակ ասում էին՝ վա՛յ, ծխում ա: Իսկ հիմա՝ ա դե լավ, ծխում ծխում ա, ոչինչ»:***
> ***Ա.ս., 26-35 տ. խումբ, ք. Իջևան***

Երիտասարդների կարծիքները կիսվեցին երկու մասի՝ մի մասն այժմ էլ ձգտում է շուտափույթ կարգավորել որոշ առողջական ու ֆինանսական հարցեր և ունենալ երեխաներ՝ բնակչության աճին նպաստելու համար, իսկ մյուս մասը դա աննպատակ է համարում, մասնավորապես՝ նշելով բանակի անապահովությունն ու այնտեղ առկա խնդիրները, երկրի թշնամիների խնդիրը, որոնք երեխաների ապագայի համար անհանգստանալու հիմնական պատճառն են:

> ***«Հիմա մեր մոտ փոխվել ա, որ ավելի շատ սերունդ տանք, մեր պատկերացրած հայը ոնց պետք ա լինի այ էդ ձև դաստիարակենք մեր երեխաներին, իրանց սոցիալական վիճակը ապահովելով մեծացնենք, արժանի զավակ տանք մեր երկրին, հիմա որ նայում ես, թե ինչ վատ վիճակի ենք հասել, ամոթ կլնի մեզ համար, որ ամեն ինչը թողնենք ու գնանք»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, գ. Գետաշեն***

Արտագաղթը հատկապես խիստ նկատելի է գյուղական համայնքներում.

> ***«Մարդիկ իրենց դռները փակում, գնում են, օրեցօր պակասում ա Հայաստանի բնակչության թիվը»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, գ. Գետաշեն***

Ըստ մարզաբնակ երիտասարդների՝ վերջին տարիներին Հայաստանում տեղի ունեցող հատկանշական գործընթացներից է նաև մշակութային հեղափոխությունը, եվրոպամետությունը, որի հետևանքով վերանում են որոշ ազգային արժեքներ, բարքեր, սովորույթներ: Հայաստանն աստիճանաբար ավելի է փորձում նմանվել «այլ երկրների»: Ըստ երիտասարդների՝ այդ միտումը միշտ էլ եղել է, սակայն վերջին տարիներին էլ ավելի ընդգծված է դառնում: Այս փոփոխությունը հատկապես բնորոշ է հետհեղափոխական շրջանին: Մարզաբնակ երիտասարդների կարծիքով՝ եվրոպամետությունն իր հետ բերել է հանրային շահի հանդեպ անտարբերություն, անուշադրություն, եսասիրություն. այս կարծիքը բնութագրական է ինչպես գյուղաբնակների, այնպես էլ քաղաքաբնակների համար:

> ***«Եթե առաջ մարդիկ մտածում էին դիմացինի կյանքի մասին, ապա հիմա՝ միայն սեփական կյանքի մասին: Անտարբերություն, էգոիստական վարք կա՝ ես իմ տանը, ես իմ հոգսով, մանավանդ քովիդից հետո: Նույնիսկ դեպք ա լինում հարևանիդ տանը, դու չգիտես էլ, թե ինչ ա եղել էդ մարդու հետ»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գյումրի***

> ***«Եվրոպան, Ամերիկան միշտ ունեցել են և ունեն ազգային արժեքները քանդելու միտումներ՝ միասեռականությունից սկսած: Բացի դա, ուժեղը երբեք թույլի կողքը չի կանգնի, միշտ ձգտում է ուժեղին»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Գյումրի***

Բացի դրանից՝ երիտասարդների կարծիքով, եվրոպականացման հետ մեկտեղ ստեղծված նոր արժեքային համակարգը, ներառյալ ազատական (լիբերալ) արժեքները, հայաստանյան միջավայրում չարաշահվեցին, ընկալվեցին և օգտագործվեցին ապակառուցողական եղանակով: Մասնավորապես, խոսքի ազատությունը վերածվեց անպատասխանատու և միմյանց դեմ ուղղված գործողությունների.

> ***«Մեր ժողովրդի իրավագիտակցությունը էնքան ցածր մակարդակի վրա ա, որ ազատությունը շփոթում են սանձարձակության հետ»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Մարտունի***

> ***«Հայ իրականության մեջ ավելի շատ դա վերածվեց սանձարձակության, քան ազատ խոսքի իրավունքի: Այսինքն՝ ինչքան էլ մենք ձգտում ենք եվրոպական մտածելակերպով, եվրոպական էդ օրենքներով շարժվել, մեկ է, այսինքն՝ մեր արմատներում, այսինքն չկա էդ ամեն ինչը: Եվ հայը չի կարող երբեք եվրոպացու նման մտածել և գործել: Այսինքն՝ եվրոպական մոտեցումները մեր համար էդքան էլ իրատեսական չեն»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս***

Արժեքային մակարդակում տեղի ունեցող անցանկալի փոփոխություններից է սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչների ցուցադրական ակտիվությունն ու տարածվածությունը, որը, ըստ մարզաբնակ երիտասարդների, հակասում է ինչպես ազգային կենսակերպին, բարոյական արժեքներին, այնպես էլ անդրադառնում է հասարակության միասնականությանն ու առողջությանը, որոնք շատ կարևոր են հատկապես արտաքին սպառնալիքների պայմաններում.

> ***«Ես չեմ ասում՝ վայ ապրես, որ դու համասեռամոլ ես, եթե մարդը ինձ նեղություն չի տալիս, չի վնասում, չի գողանում, չի սպանում՝ ես իր նկատմամբ անտարբեր կլինեմ»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Մարտունի***

Չնայած եվրոպականացման մասին մարզերում ավելի քննադատական, քան լավատեսական տրամադրությունների, ինչպես նաև ազգային արժեքների ու ավանդույթների պահպանման մասին խոսելուն՝ նշվել է նաև ընդունված աշխարհայացքի, մոտեցումների, ինքնագնահատականի փոփոխման, վերանայման անհրաժեշտությունը, որը պայմանավորված է հատկապես վերջին պատերազմի պայմաններում խոսքերի և իրականության միջև անհամապատասխանությամբ.

> ***«Մենք այն չենք եղել, ինչ մեզ ասել են: Մեզ արժեքների փոփոխություն ա պետք՝ ամեն ինչ զրոյից սկսելու համար: Մինչ պատերազմը մեզ կերակրել էին էն մտքերով, որ մենք տարածաշրանում ամենահզորն ենք, իսկ մեր թշնամին ոչխար ա, բայց պատերազմից հետո մենք ենք էդ իրավիճակում հայտնվել»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս***

Նշված ժամանակահատվածի կարևորագույն երևույթներից էր նաև Covid-19-ը համավարակը, որը նույնպես, երիտասարդների խոսքերով, հայաստանցիների փոխհարաբերությունների համար դժվար փորձություն էր: Համավարակի ընթացքում սոցիալական հեռավորության պահպանման պահանջը, միմյանց հետ երկար ժամանակ ուղղակիորեն չառնչվելը մարդկանց որոշ իմաստով միմյանցից բաժանեց, հեռացրեց.

> ***«Օրինակ՝ հիմա չկա քովիդ, բայց բաներ կան, որ էլ առաջվանը չի, օրինակ՝ հարևան-հարևան, բարեկամ-բարեկամ, կենցաղային շփումներ, սոցիալական շփումները սառել ա»:***
> ***Ի.ս., 18-35 տ. խումբ, ք. Գորիս***

Համավարակից հետո, ըստ երիտասարդների, առաջ եկան առողջական խնդիրներ, որը պատերազմի հետ միասին բերեց անկայունության, լարված մթնոլորտի ու ներքին անհանգստության: Մարդիկ այժմ սթրեսային են, դեպրեսիվ, ընկճված, տրամադրությունն անկման մեջ է, որն էլ խանգարում է կյանքի բնականոն ընթացքին: Արդյունքում մարդկանց մի մասը փորձում է իր համար ինչ-որ ապահով վայր գտնել, իսկ մյուսը՝ «անկախ ամեն ինչից, հայրենիքի համար ինչ-որ բան անել»: Դրական առումով պատերազմի ազդեցությունն է այն, որ կյանքն այսօր ավելի է արժևորվում, ամեն վայրկյանն այժմ նպատակային օգտագործելը կարևոր է:

Ընդհանուր առմամբ, երիտասարդների կարծիքով, ոչ միայն Հայաստանում, այլև գլոբալ առումով նկատելի է մարդկային զգացմունքների, «մարդկայնության» վերացումը. աշխարհը միտված է անտարբերության: Կարևոր է մարդկային վերաբերմունքի և մարդկային շփման «համաշխարհային կուլտուրայի» պահպանումը, ինչպես նաև ազգային արժեքների պահպանումը: Բացի դրանից՝ ինչպես նշվեց, «բոլորի գլխավոր երազանքը խաղաղությունն է»:

Հանրային իրադարձությունների մասին տեղեկատվության ստացման նախընտրելի միջոցները

Հետաքրքիր է նկատել, որ տեղեկատվության աղբյուրների հանդեպ վերաբերմունքի, նախապատվությունների առումով մարզաբնակ (այդ թվում՝ գյուղաբնակ) երիտասարդների կարծիքը գրեթե չի տարբերվել երևանաբնակներից. գրանցվել է առցանց տեղեկատվության նախապատվելիություն ավանդական ԶԼՄ-ների սպառման համեմատ և առհասարակ ցանկացած պաշտոնական և ոչ պաշտոնական տեղեկատվության հանդեպ ցածր վստահություն:

Տեղեկությունների ստացման աղբյուրների շարքում երիտասարդները նշել են

սոցիալական ցանցերը, առցանց ԶԼՄ-ները և ալիքները՝ «Telegram», «News.am», «Azatutyun» ռադիոկայան, «Tert.am», «Civil.net», «Aurora Media», պաշտոնական նախարարությունների էջեր, «Հ1» (թվային հարթակ), «Ինֆոքոմ»-ի տելեգրամյան ալիք, «Հետք», «Zone Positive» կայքէջ, «Zartonq Media», «Politic.am», «168.am», տարբեր վերլուծաբանների կարծիքներ (YouTube), Facebook, Twitter: Առցանց աղբյուրներից գրեթե բոլոր խմբերի մասնակիցները նշել են Telegram ալիքները, որոնք վերջին շրջանում ավելի նախընտրելի են դարձել, քան լրատվության ստացումը Facebook սոցիալական ցանցի միջոցով. Facebook-ը համարում են կեղծ լուրերի (fake news) ակտիվ տարածման հարթակ:

Երիտասարդների համար տեղեկատվության աղբյուր է նաև միջանձնային հաղորդակցումն այն մարդկանց հետ, ովքեր իրենց շրջանում հեղինակություն են վայելում կամ եղել են իրադարձությունների գոտում և ավելի օբյեկտիվ են: Սակայն անգամ այս պարագայում երիտասարդները նշել են տեղեկատվության ցանկացած աղբյուրի անվստահելի լինելու հավանականությունը.

> ***«Ոչ մի տեղեկատվության 100 %-ով, ինձ թվում ա, ոչ մեկս էս պահի դրությամբ չի վստահում: Որովհետև էս պատերազմական իրավիճակներում կոնկրետ ես Գորիսում եմ ապրում ու գալիս էին ներկայացնում՝ էս գյուղում վիճակ չկա, սաղ տները ռմբակոծել են, սենց նենց... Ու երկու երեք օր հետո ես էդ գյուղով անցնում եմ՝ ոչ մի բան: Այսինքն՝ խուճապ, ու չգիտես ինչու արհեստական ձևով սարքած ինչ-որ բան»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս***

> ***«Պատերազմի ժամանակ լուրերով ուրիշ բան ես կարդում, բարեկամներիցդ լրիվ ուրիշ տեղեկատվություն ես ստանում: Լուրերով կարդում ես, որ կրակոցներ չկան, իսկ որ խոսում ես իրենց հետ, իմանում ես, որ կան: Ու սկսում ես չհավատալ էդ ամենին: Լսում ես զուտ իմանալու համար»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գյումրի***

> ***«Հեռուստացույցին հետևում ենք, բայց դե բոլոր ալիքներն էլ ինչ-որ քաղաքական ուղղվածություն ունեն: Ոչ մի տենց ալիք չգիտեմ, որ ինքը առանձնապես շատ անկողմնակալ ա: Նույնն էլ երևի թե էդ մեդիա կայքերի, հա՞, վերաբերյալ: Ինձ թվում ա՝ միակ տարբերակը երևի տելեգրամյան ալիքներն են կոնկրետ իմ համար»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, ք. Արմավիր***

Համեմատելով պաշտոնական և ոչ պաշտոնական տեղեկատվությունը՝ քննարկումների մասնակիցների մի մասը նշել է պաշտոնական տեղեկատվությանը վստահելու, մյուսները՝ այն վստահելի չհամարելու մասին: Մասնավորապես՝ 2020 թ. պատերազմից հետո ՀՀ ՊՆ և այլ պետական հեռուստաալիքների պաշտոնական տեղեկատվությունը դարձել է պակաս վստահելի, քան դրանից առաջ, քանզի, ըստ երիտասարդների, չի համապատասխանել իրականությանը: Միևնույն ժամանակ նշվել է, որ պաշտոնական ալիքներով պատերազմական իրականության ամբողջ պատկերը ներկայացնելու դեպքում հասարակության մեջ խուճապ կառաջանար.

> ***«Սահմանի հետ կապված 20թ.-ից հետո եկավ անվստահություն, քանի որ ունեինք այն, ինչ ունեինք, բայց պաշտոնական լրատվահոսից կամ որևէ այլ էջից, թերթից դա ոչ մի անգամ չէիր կարող իմանալ»:***
> ***Ա.ս., 26-35տ., ք. Իջևան***

> ***«Ադեկվատ ենք մոտենում, որովհետև եթե լրիվ ճշգրիտ լինի, պանիկա ու քաոս կլինի, ու երկրի վիճակն ավելի վատ կլինի»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գյումրի***

Տեղական տեղեկատվական աղբյուրներին չվստահելը դրդում է, որ հետևեն արտերկրի, այդ թվում՝ ադրբեջանական ԶԼՄ-ներին. [4] այդպես անող երիտասարդները գիտակցում են դրա վտանգավորությունը:

> ***«Ճիշտ ա՝ էդ ադրբեջանական կայքերը նայելուց հետո հոգեբանորեն ահագին ճնշվում ես, բայց դե ամեն դեպքում ես ըտեղից եմ օգտվում, ու իրականությանը մոտ ա իրանց գցած ամեն մի նյութ»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս***

Հայաստանում ադրբեջանական տեղեկատվական աղբյուրներից օգտվելը՝ Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին պատկերացում կազմելու համար, ցույց է տալիս հայաստանյան ԶԼՄ-ների, տեղեկատվական այլ միջոցների հանդեպ հանրային վստահության ցածր մակարդանը, որը ՀՀ տեղեկատվական անվտանգության սպառնալիքներից է:

Լինելով տեղեկատվական աղբյուրների բազմազանության մեջ, դրանցից մշտապես օգտվելով և միաժամանակ դրանց մեծ մասին չվստահելով՝ երիտասարդները նաև աշխատում են շատ չհետևել նորություններին, որովհետև անընդհատ բացասական տեղեկություններ են հնչում՝ «պատերազմ, զոհեր», հոգեբանական ճնշում է առաջանում:

Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի դինամիկան՝ ՀՀ մարզերի երիտասարդների պատկերացումներում

Քննարկելով ռուս-ուկրաինական հակամարտության և, մասնավորապես, 2022թ. Ուկրաինայում Ռուսաստանի սկսած պատերազմի պատճառները՝ ՀՀ մարզային քաղաքներում բնակվող երիտասարդները նշեցին հետևյալ պատճառները.

- Ռուսաստանի ցանկությունը՝ ամրապնդելու իր սահմանները, վերադարձնելու նախկին խորհրդային հանրապետությունների մի մասին իր ազդեցության ներքո,
- Ռուսաստանի փորձը՝ պաշտպանվելու ՆԱՏՕ-ի ընդլայնումից, այդ թվում՝ Ուկրաինան հակառուսական գործողություններում ներառելու արևմտյան քաղաքականությունից,
- Ռուսաստանի արձագանքը՝ իր շահերին սպառնացող վտանգներին (նշվել են ՆԱՏՕ-ի ծովային ուժերի մոտենալը ՌԴ սահմաններին, Ուկրաինայում ամերիկյան կենսալաբորատորիաների ստեղծումն ու գաղտնի գործունեությունը),
- Ուկրաինայի եվրոպամետ քաղաքականությունը,
- Ուկրաինայի նախագահ Զելենսկու անձնական սադրիչ գործոնը,
- ՌԴ նախագահ Պուտինի կողմից Ռուսաստանի ծանրակշիռ դերն ու նշանակությունը վերադարձնելու փորձերը,
- Պուտինի «մարազմատիկ» նկրտումները:

Ֆոկուս-խմբային քննարկումների դինամիկան ցուցադրել է ռուս-ուկրաինական հակամարտության պատճառների և գործոնների բացատրության անձնավորված և համակարգային մոտեցումներ: Անձնավորված բացատրություններում շեշտադրվել է ՌԴ նախագահ Պուտինի և Ուկրաինայի նախագահ Զելենսկու գործոնը: Քննարկումների ընթացքում փորձել են և՛ արդարացնել երկու պետությունների ղեկավարներին, և՛ քննադատել ու փնովել նրանց: Եթե Ռուսաստանի դեպքում ներկայացվում են Պուտինի՝ ծրագրավորված, ռազմավարական բնույթի պլանները (Խորհրդային Միության վերականգնում, ՆԱՏՕ-ի հետագա ընդլայնման կանխում, ազդեցության գոտիների ամրապնդում և այլն), ապա Զելենսկու գործողությունները պայմանավորված են հակառուսականությամբ և արևմտամետությամբ.

4 Ադրբեջանական լրատվական որոշ կայքէջեր, առցանց ԶԼՄ-ներ քարոզչական նպատակներով հեռարձակվում են հայաստանցիների համար մատչելի՝ ռուսերենով և անգամ հայերեն լեզվով (խմբ.):

«Պատերազմը սկսել է Ռուսաստանը, սակայն պատճառը Ուկրաինայի, մասնավորապես՝ Զելենսկու կողմնորոշվածությունն է դեպի Արևմուտք, ՆԱՏՕ-ին անդամակցելու մտադրությունը, հայտարարությունները: Այդ համատեքստում ՌԴ-ի՝ որպես գերտերության գործողությունները տրամաբանական են»:
Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Հրազդան

«Իմ կարծիքով ամեն ինչը գալիս ա նախագահից, ինձ թվում ա՝ Զելենսկին դրսից բերված ա ու հատուկ աշխատում ա Արևմուտքի համար, եթե իրա փոխարեն լիներ մի քիչ ռուսամետ ուրիշ մեկը, կարծում եմ, բանը սրան չէր հասնի»:
Ա.ս., 18-35տ. խումբ, ք. Վայք

Խմբային քննարկումներից մեկում Ռուսաստանի և Ուկրաինայի միջև հակամարտությունը նմանեցվել է Հյուսիսային և Հարավային Կորեաների միջև բաժանմանը. նույն ժողովուրդն է, սակայն մի կողմից՝ ազատություններն են, մյուս կողմից՝ վախի մթնոլորտը: Մեկ այլ քննարկման ժամանակ, դարձյալ շեշտելով ռուսների և ուկրաինացիների՝ մեկ ազգ – երկու պետություն լինելը, նրանց նմանեցրել են Հայաստանի և Ղարաբաղի հայերին, իսկ ռուս-ուկրաինական հակամարտությունը՝ արհեստականորեն ստեղծված բաժանման հետևանք.

«Ուկրաինայի բնակչության ոգևորվածությունը, մոբիլիզացիային մասնակցելն ու Ռուսաստանը՝ հազարներով փախան, անգամ դատապարտվեցին: Մարդիկ ձգտում են խոսքի, կյանքի, մտքի, իրավունքի ազատության: Նույն ձև՝ Հյուսիսային ու Հարավային Կորեան է»:
Ա.ս., 26-35տ. խումբ, ք. Իջևան

«Ոնց որ հայաստանցիներն ու ղարաբաղցիները իրար հետ հակամարտեն, նույն բանն ա Էնտեղ»:
Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Հրազդան

«Ոնց Էստեղ մեր հայն ա պահում իր հողը արյան գնով, Էնտեղ էլ, ինձ թվում ա, ուկրաինացին ա պահում»:
Ի.ս., 26-35տ. խումբ, գ. Ալաշկերտ

Վերոնշյալ պատճառաբանումների մեջ առանձնացել է այն բացատրությունը, թե տվյալ հակամարտությունը Ռուսաստանի և Արևմուտքի գերտերությունների միջև է, իսկ Ուկրաինայի տարածքը զուտ մարտադաշտ է: Այդ բացատրությունն առավել տարածված էր.

«Ռուսաստանը զգում էր, որ մոտենում են իր սահմանին, և նա փորձեց ինքը ավելի նախահարձակ լինել, քան սպասել, որ կգա, կհասնի իր սահմանին, դրա համար նոր արթնանար»:
Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս

«Որ ասում ենք՝ կա երրորդ կողմ՝ Թուրքիա, Ադրբեջան, դրանք փոքր ֆիգուրներ են համեմատած, այստեղ Ամերիկա-Ռուսաստան հակամարտությունն ա, սա նույնիսկ ՆԱՏՕ-Ռուսաստան չի, այլ Ամերիկա-Ռուսաստան, և այստեղ կա երրորդ թաքնված պետություն՝ Չինաստանը, որ ամեն կերպ ձգտում ա Եվրոպա մտնի, իսկ Ամերիկային ձեռք չի տա, որ Եվրոպան անկախ լինի, Ամերիկային պետք է իրենից կախյալ Եվրոպա»:
Ա.ս., 26-35տ. խումբ, ք. Վանաձոր

Հակամարտության ուղղակի և անուղղակի մասնակիցները

Համապատասխանաբար, ռուս-ուկրաինական հակամարտության ուղղակի մասնակիցներ են նշվել Ռուսաստանը՝ մի կողմից, և Ուկրաինան՝ մյուս կողմից. վերջինս հակամարտության և հատկապես պատերազմում հանդես է գալիս ոչ ինքնուրույն, իր ետևում ՆԱՏՕ-ի պետություններն են, ըստ երիտասարդների կարծիքի՝ հատկապես ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Լեհաստանը, Գերմանիան, մինչդեռ Ֆրանսիան դեռ փորձում է առավել չեզոք դիրք պահպանել: Խմբային քննարկումներում հաճախ նշվել է նաև, որ ՆԱՏՕ-ն, ԵՄ-ն, Մեծ Բրիտանիան ռուս-ուկրաինական հակամարտության ուղղակի մասնակիցներ են, իսկ հակամարտությունը տեղի է ունենում ԱՄՆ-Ռուսաստան, Արևմուտք-Արևելք ձևաչափում՝ Ուկրաինայի և այլ տարածքներում:

Եթե Արևմուտքի գործոնը Ուկրաինայում Ռուսաստանի վարած պատերազմում, երիտասարդների կարծիքով, առավել ակտիվ է և կարևոր (դրական և բացասական առումներով), ապա Արևմուտքի (ՆԱՏՕ) ակտիվ կերպարի առավել ակտիվ մասնակիցներն են ԱՄՆ-ն ու Մեծ Բրիտանիան, առավել պասիվը՝ Եվրամիությունը: Երիտասարդների պատկերացումներով՝ ԵՄ-ն առաջնորդվում է ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի քաղաքական օրակարգերով, մինչդեռ այդ պատերազմից նույնպես տուժում է և դժվարությամբ է հաղթահարում սեփական խնդիրները.

> ***«Իրանք [Ուկրաինան] ուզում են ազատվեն Ռուսաստանից: Հայաստանում էլ կան տենց տրամադրություններ՝ Ռուսաստանից հրաժարվեն, մտնեն Եվրոպա, իրանց համար տաք, սիրուն... Բայց ոնց որ տենում ենք՝ Եվրոպան սկի էլ տաք չի: Հեսա ձմեռը գալիս ա, ու Եվրոպայի վիճակը արդեն...»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Վայք***

> ***«Էս պահի դրությամբ Եվրոպան զրկված ա գազամատակարարումից նրա հաշվին, որ Ռուսաստանի դեմ սանկցիաներ սահմանեց, իսկ Եվրոպային հիմնական գազ տվողը Ռուսաստանն էր. այսինքն՝հիմա ժողովուրդը կանգնելու ա փաստի առաջ՝ո՞նց տաքանա ձմեռը»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, գ. Գետաշեն***

Թուրքիան համարվում է այս պատերազմի անուղղակի կողմ՝ կանգնած Ուկրաինայի կողքին: Հնչել է կարծիք, որ Ուկրաինայի հաղթանակը կարող է նպաստավոր լինել Թուրքիայի համար՝ պանթուրքիզմի /պանթուրանի/ ծրագրի իրականացման համատեքստում:

> ***«Եթե Ուկրաինան էս պատերազմում հաղթի, օրինակ, ու Ռուսաստանից ինչ-որ տարածքներ վերցնի, մեծ օգուտ կունենա Էստեղ Թուրքիան՝ իր ծրագիրը [պանթուրքիզմ] իրականացնելու համար»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս***

> ***«Ադրբեջանը Թուրքիայի Էրեխեն ա. ինչ անում ա Թուրքիան, էն անում ա Ադրբեջանը»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Հրազդան***

> ***«Ադրբեջանին ու Թուրքիային ձեռ կտա Ուկրաինայի հաղթանակը, դե չակերտավոր Ռուսաստանը Հայաստանի կողմից ա, ու երբ որ Ռուսաստանը թուլանա, Ադրբեջան, Թուրքիա՝ Հայաստանի վրա իրենց ուժերը կկարողանան աշխատացնել, իսկ եթե հակառակը լինի, այսինքն՝ Ռուսաստանը հաղթի, Ռուսաստանը հնարավոր ա դառնա գերիշխող երկիր»:***
> ***Ա.ս., 18-35տ. խումբ, ք. Վայք***

Նշվում է նաև, որ Թուրքիայի համար ավելի կարևոր է Ղրիմի հարցը, քանի որ այն ժամանակին պատկանել է Թուրքիային. Թուրքիան ցանկանում է, որ Ղրիմը միանա Ուկրաինային (նշվում է, որ հենց այդ նպատակով Թուրքիան զենքով օգնում է ուկրաինական կողմին), և եթե Ղրիմը միանա Ուկրաինային, ապա Թուրքիան ազատ մուտք կունենա Ղրիմ, օրինակ՝ Ղրիմում թուրք խաղաղապահներ կտեղակայվեն և կամրապնդվի Ղրիմում Թուրքիայի ռազմավարական ներկայությունը:

Մարզաբնակ երիտասարդների մեծամասնության կարծիքով՝ Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմից, ինչպես նաև Ղարաբաղյան հակամարտությունից խուսափելն անհնար էր, այստեղ հատվում են գլոբալ շահեր: Միաժամանակ 2022թ. Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմից խուսափելը հնարավոր էր, եթե Ռուսաստանի և Ուկրաինայի ղեկավարները գնային փոխադարձ զիջումների, իսկ որոշ երիտասարդների կարծիքով՝ Ռուսաստանը շարունակեր համագործակցել ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ:

Հայաստանի դիրքորոշումը այս պատերազմի մեջ **«առավելապես չեզոք է, և պետք է չեզոք լինի»**: Ըստ երիտասարդների՝ Ռուսաստանը մնում է Հայաստանի դաշնակիցը, որը, ներկայացված կարծիքների համաձայն, հիմնականում օբյեկտիվորեն պայմանավորված իրողություն է, կախված չէ հայերիս ցանկությունից.

> ***«Կարելի ա ասել Հայաստանի ամբողջ տնտեսությունը Ռուսաստանի ձեռքի տակ ա, և շատ բարդ գործընթաց պետք է արվի, եթե մենք պետք է ձգտենք դեպի Ամերիկա»:***
> ***Ա.ս., 18-35տ., ք. Գորիս***
> ***«Երկու վատերի մեջ ավելի լավ է Ռուսաստանը»:***
> ***Ի.ս., 18-35տ. խումբ, ք. Գյումրի***

Պատերազմի ընթացքն ու հնարավոր զարգացումները

Երիտասարդները կարծում են, որ Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմը դեռ երկար է շարունակվելու, հնարավոր է՝ այլ ձևաչափով, դարձյալ քանի որ, ըստ մեծամասնության կարծիքի, այն գլոբալ հակամարտություն է Ռուսաստանի, Արևմուտքի (առաջին հերթին՝ ԱՄՆ-ի) և այլ պետությունների միջև՝ ազդեցության գոտիների համար:

> ***«Ինձ համար շատ տագնապալի վիճակ ա առաջանում, քանի որ Ռուսաստանը Ուկրաինայում փաստացի պարտություն է կրում, իսկ Ռուսաստանը չի սիրում պարտություն, ունի միջուկային զենք, որը որ կարա օգտագործվի ինչպես Եվրոպայի, այդպես էլ Ուկրաինայի վրա: Իսկ որպես Ռուսաստանի շահ՝ իր ամբողջ ազդեցության գոտին պահելն ա ու հնարավորինս ավելի շատ ազդեցություն ունենալն ա»:***
> ***Ա.ս., 26-35 տ. խումբ, ք. Վանաձոր***

> ***«Ինձ թվում ա՝ Ռուսաստանը էն պետությունն ա, որ չի կանգնի ոչ մեկի առաջ»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս***

Քննարկումների ընթացքում ակնհայտ էր միջազգային անվտանգային կառույցների հանդեպ վստահության կտրուկ անկում.

> ***«Եթե առաջ ասում էինք՝ հա՛, ՄԱԿ-ը պետք է մարդու իրավունք պաշտպանի, հավատում էինք դրան, իսկ տեսանք, որ դա պրակտիկ չի իրականացվում, կոնկրետ ես արդեն չեմ վստահում ուղղակի: Իրենք ուղղակի կան իրենց համար՝ ոչ թե մարդու»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գյումրի***

Երիտասարդների կարծիքով՝ ո՛չ ՆԱՏՕ-ն, ո՛չ ՀԱՊԿ-ը պատերազմին ուղղակիորեն չեն մասնակցելու. ՆԱՏՕ-ն չի մասնակցի, որովհետև այդ կազմակերպության անուղղակի մասնակցությունը Ուկրաինայի կողմից արդեն ակտիվորեն տեղի է ունենում, իսկ ՀԱՊԿ-ը

մասնակցել չի կարող, քանի որ «որպես կառույց սպառել է իրեն վաղուց» (Ի.ս., 18-35տ. խումբ, ք. Գյումրի):

Ինչ վերաբերում է Երրորդ համաշխարհային պատերազմի հավանականությանը, ապա երիտասարդների մեծամասնության կարծիքով՝ այն արդեն սկսվել է և տեղի է ունենում աշխարհի տարբեր տարածաշրջաններում, ռազմական, տնտեսական և տեղեկատվական եղանակներով: Ատոմային զենքի կիրառման հավանականությունն ավելի մեծ են համարում Ռուսաստանի կողմից և այն դեպքում, եթե առանց դրա կիրառման Ռուսաստանը սկսի պարտվել.

> ***«Մենք անընդհատ սովոր ենք, որ համաշխարհայինը մեծածավալ ա, բայց ինչի չեք նայում, որ արդեն իսկ Երրորդ համաշխարհայինն ա, հիբրիդային պատերազմներ ա, ու ես կարծում եմ, որ էս պատերազմը ոչ թե կարա բերի ներգրավվածության, այլ կառույցների կազմալուծման»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Վանաձոր***

> ***«Էլ Երրորդ համաշխարհայինը ո՞նց ա լինում, չորս կողմից արդեն պատերազմ ա»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, գ. Ալաշկերտ***

> ***«Եթե Ռուսաստանը զգա, որ ինքը Ուկրաինայի հետ պայքարը պարտվում ա, ու ինքը ներկա պահին կռվում ա ոչ միայն Ուկրաինայի, այլ ամբողջ աշխարհի դեմ, ու հետզհետե Ռուսաստանը Ուկրաինայի հետ պայքարում գնա դեպի պարտության կողմ, ինքը չի պարտվի, այլ կկիրառի միջուկային զենք»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, գ. Գետաշեն***

Հայաստանի բարեկամներն ու թշնամիները՝ այս պատերազմի համատեքստում

ՀՀ մարզերի քաղաքաբնակ երիտասարդների հետ բոլոր քննարկումներում շեշտվեց այն կարծիքը, թե «**Հայաստանը դաշնակիցներ չունի**»: Տվյալ կարծիքը հիմնավորվեց նրանով, որ որևէ պետություն այսօր պատրաստ չէ էականորեն աջակցելու Հայաստանին՝ իր մոտեցումներն ու գործողությունները համապատասխանեցնելով ՀՀ շահերին: Այն ամենը, ինչ արվում է հայամետ դիրքերից, առաջին հերթին բխում է այլ պետությունների շահերից:

> ***«Որովհետև թեկուզ և մենք փոքր երկիր ենք, բայց շատ կարևոր նշանակություն ունենք էդ մեծ երկրների համար՝ Իրան, Ամերիկա, Ռուսաստան, Թուրքիա, բոլորը ցանկանում են էստեղ ազդեցություն ունենալ: Բոլորի ցանկությունը մեկն է՝ ի շահ իրենց պետության, որովհետև մենք գիտենք, որ չկան ինչ-որ բարեկամներ և այլն և այլն, կա ուղղակի շահ»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս***

> ***«Առաջին հերթին մենք պետք ա մեր դաշնակիցը լինենք, երկրի ներսը թույլ չլինի, կառավարության, ֆինանսական, ազգային, սկզբունքների առումով»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գյումրի***

Որպես Հայաստանի թշնամիներ առաջին տեղում նշվել են Ադրբեջանն ու Թուրքիան, այնուհետև՝ իրենց դաշնակից Պակիստանը, ապա՝ Իսրայելը, որն աջակցել է Ադրբեջանին 2020թ. ղարաբաղյան պատերազմից առաջ՝ զենք և ռազմական տեխնոլոգիաներ մատակարերով, իսկ պատերազմի ընթացքում՝ դիվանագիտորեն: Որոշ քննարկումներում նշվել է, որ Հայաստանի հանդեպ ոչ բարեկամաբար է վերաբերվում նաև Վրաստանը, որը Հայաստանը դիտում է որպես իր թշնամու՝ Ռուսաստանի դաշնակից, ինչպես նաև էական տնտեսական կախվածության մեջ է Թուրքիայից: Վրաստանի՝ որպես հարևան պետության վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ բազմիցս քննադատվել է, հատկապես՝ 2020թ.

ղարաբաղյան պատերազմի ժամանակ Հայաստանի հետ ցամաքային սահմանը փակելու համար.

> ***«Դե եթե պատերազմական իրավիճակում քո միակ ընկեր պետությունը կարա փակի ինչ-որ բաներ քո համար, իրանք ավտոմատ իմ համար սկսում են դառնալ ոչ թե թշնամի եկեք ասենք, այլ էն պետությունը, ով որ առաջինը կարա քեզ դավաճանի»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Արմավիր***

> ***«Վրաստանը իրա լռությամբ ա թշնամի, առհասարակ չխառնվելով ամեն ինչով, ու էտ դարերի պատմություն ունի»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Վայք***

Չնայած Հայաստանի բարեկամ երկրների գործելակերպի անհամապատասխանությանը երիտասարդների սպասումներին, այնուամենայնիվ, որպես այդպիսիք նշվել են Ռուսաստանը, Ֆրանսիան, Իրանը, առանձին դեպքերում Հունաստանը (որպես Թուրքիայի թշնամի): Հետաքրքիր է նկատել, որ եթե երևանյան երիտասարդության կարծիքներում Ռուսաստանը ներկայացվել է որպես հիմնական դաշնակից՝ իրեն վերագրվող թերություններով, սխալներով, քննադատությամբ հանդերձ, ապա մարզերի քաղաքաբնակ երիտասարդության կողմից Ռուսաստանը նշվել է Հայաստանի բարեկամ համարվող պետությունների ցանկի վերջում: Ենթադրվում է, որ մարզաբնակ և հատկապես սահմանամերձ բնակավայրերում ապրողներն ավելի անմիջական, սուր, ուղղակի են տեսել և ընկալում արտաքին սպառնալիքները, ուստի, ի տարբերություն մայրաքաղաքի բնակիչների, անում են ավելի հստակ և կտրուկ եզրակացություններ: Բացի դրանից՝ Ռուսաստանի հանդեպ քննադատական վերաբերմունքը պայմանավորված է Հայաստանի ստորադաս դիրքով. Հայաստանը «Ռուսաստանի տակ է», «առանց Ռուսաստանի թույլտվության ոչինչ չի կարող անել» և այլն:

Ռուսաստանի՝ որպես ՀՀ դաշնակցի մասին մարզային քննարկումների հիմնական շեշտադրումը հիասթափությունն է. Հայաստանում Ռուսաստանից բազմիցս հիասթափվել են, հատկապես՝ 2020թ. ղարաբաղյան պատերազմի ընթացքում և դրանից հետո:

> ***«Առաջին անգամ մարդիկ վստահ են, որ էն գաղափարը, որ եթե ռուսը չըլներ, թուրքը կգար կուտեր, հիմա էդ տարբերակը չկա, որովհետև տեսնում ենք, որ ռուսը չի, սա առաջին անգամ ա, երբ որ Հայաստանի ամբողջ ժողովուրդն ա տենց բաներ անում, որ ռուսը երաշխիք չի, և մեզ պետք ա այլ երաշխիքներ, և սա առաջին դեպքն ա, որ նույնիսկ ռուսամետ մարդիկ արտահայտվում են, որ ռուսի մեջ փրկություն չկա: Երկրորդ՝ առաջին անգամ ա, որ Հայաստանում մարդիկ խոսում են, որ լավ կլինի ռուսական զորքը Հայաստանից դուրս գա, էս թեզն էլ ա գնում ու բավականին լայն շրջանակներում, իսկ մենք գիտենք, որ խոսքը, երբ որ չի արգելակվում, դառնում ա իրականություն»:***
> ***Ա.ս., 26-35 տ. խումբ, ք. Վանաձոր***

Ռուսաստանն անվանելով Հայաստանի «չակերտավոր բարեկամ»՝ քննարկումների մասնակիցներն, այնուամենայնիվ, նշել են Ռուսաստանի հետ ռազմավարական հարաբերությունների անխուսափելիությունը.

> ***«Մենք ավելի շատ ուղղվածություն ունենք դեպի Եվրոպա, բայց հենց դա ա խնդիր առաջացրել, որ թեկուզ մենք ունեցել ենք 20 թվի պատերազմը: Ռուսաստանը մեծ ազդեցություն ունեցավ, այսինքն՝ փորձեց նորից հետ բերել ուղղվածությունը դեպի Ռուսաստան: Մենք Է՛ս տարածաշրջանում ենք, և ավելի ճիշտ կլինի դեպի Ռուսաստան ուղղվածություն ունենանք»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս***

> ***«Բացեիբաց չենք ասում, որ վատ է, բայց ներքուստ շատ վատ է: Մենք ցույց ենք տալիս աշխարհին, որ իբր Ռուսաստանը մեր բարեկամական դաշնակիցն է, բայց բոլորն էլ հասկանում են, որ դա այդպես չէ»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գյումրի***

Հայաստանի անվտանգության հարցերում Ռուսաստանի դերակատարումը գնահատելով հատկապես 2020թ. ղարաբաղյան պատերազմի համատեքստում՝ շատ երիտասարդներ հիշատակել են նաև ՀԱՊԿ-ը, որի վերաբերյալ բոլոր դիտարկումները քննադատական էին.

> ***«ՀԱՊԿ-ի համար էլ Հայաստանը զուտ անդամ ա եղել, երբ տեսնում է, որ Ամերիկան փորձում է ինչ-որ շահ գտնել այստեղ, արագ գալիս ա»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս***

> ***«ՀԱՊԿ-ը՝ էն որ ուղղակի կա, ինքը ոչ մի բան չի անում»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Հրազդան***

> ***«Հայաստանն ունի մեծ շանս, Արևմուտքը եկել ա Հայաստան: ՀԱՊԿ-ից պետք ա դուրս գալ, մեկ ա ոչ կռվում ա Հայաստանի համար, ոչ էլ»:***
> ***Ա.ս., 26-35 տ. խումբ, ք. Իջևան***

Մարզային քննարկումներում նաև եղել են ՀՀ անվտանգության հարցերում Ռուսաստանի դերակատարումը կարևորելու փորձեր, որոնք, սակայն, Ռուսաստանին ուղղված քննադատությունների հետ համեմատ սակավ էին.

> ***«44-օրյա պատերազմը եղավ չէ՞... Վերջում իրա [Ռուսաստանի] միջամտությամբ կասեցվեց պատերազմը. հիմա որ ինքն էլ չլիներ՝ ի՞նչ կլիներ մեր վիճակը, ի՞նչ էինք անելու»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, գ. Գետաշեն***

Իրանի հետ Հայաստանի համագործակցությունն ու այդ պետության դրական ազդեցությունը հատկապես նշվել է Սյունիքի մարզում, սակայն հնչեցվել է նաև մյուս բոլոր խմբային քննարկումներում:

> ***«Տնտեսական առումով Իրանը ամենալավ դաշնակիցն ա, որովհետև Սյունիքի համար էս պահի դրությամբ նշանակալից ա, բայց ռազմական ոլորտում որևէ գործողության չի էլ պատրաստվում, եթե նույնիսկ զորք է կանգնեցրել Մեղրիի հետ սահմանին, դա Հայաստանի համար չի արել, արել ա իր սահմանը պահելու համար, վերջիվերջո ինքը մահմեդական երկիր ա, ինչքան էլ ասենք մեզ աջակցում ա, կապ չունի, ամեն դեպքում մահմեդականներն ու քրիստոնյաները առ այսօր եթե ոչ բացահայտ, ապա ներքին հակամարտություն ունեն միմյանց միջև»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս***

Հետաքրքիր է նկատել, որ Իրանի դերը քննարկումներում ավելի շատ է կարևորվել, քան Հայաստանի ավանդական բարեկամ և արդի փուլում հայաստանցիների մոտ բարձր հեղինակություն վայելող Ֆրանսիայի, որի դերակատարումը, լինելով հայամետ, երիտասարդների կարծիքով, ավելի ակտիվ և բազմակողմանի լինելու կարիք ունի:

> ***«Ֆրանսիան ինչքան էլ մեզ կրուասան հյուրասիրի իրա խոսքերով, Ֆրանսիան մեզ համար փաստացի, բացի արտահայտություններից, ոչ մի բան չի անում: Իսկ դեֆակտո ցույց տված օգնություններից կոնկրետ 44-օրյա պատերազմի ժամանակ Իրանը օգնեց մեզ ու Հնդկաստանը, որովհետև մինչ վերջինից զենք առնելը, շատ լուրջ խոսակցություններ էին գնում Հնդկաստան, Իրան և դեպի Եվրոպա ճանապարհ, որտեղ միակ դաշնակիցը էդ երկու պետությունը տեսնում էին Հայաստանին ու նամյոկով մեզ հուշում էին, որ մենք քեզ կօգնենք, Հայաստան»:***
> ***Ա.ս., 26-35 տ.խումբ, ք. Վանաձոր***

> ***«Իմ կարծիքով դաշնակիցը Ֆրանսիան ա, որովհետև էս 44-օրյայի ժամանակ էլ, էս վերջին պատերազմի ժամանակ էլ ինքը բավականին լավ արձագանքում էր: Բայց մենակ արձագանքելով չի էլի, մի քիչ էլ...»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Արմավիր***

Քննարկումների ժամանակ նշվել է, որ Հնդկաստանը կարող է լինել Հայաստանի դաշնակից, քանի որ առևտրական ճանապարհով կարող է դուրս գալ Եվրոպա հենց Հայաստանի միջով: Բացի դրանից՝ Հնդկաստանը կոնֆլիկտի մեջ է Պակիստանի հետ, հետևաբար՝ Հնդկաստանի համար ձեռնտու չէ Թուրքիա-Ադրբեջան-Պակիստան իսլամական պետությունների ռազմաքաղաքական և տնտեսական հարաբերությունների զարգացումը: Ինչպես նաև, երիտասարդների խոսքերով, Հայաստանը պատրաստվում է Հնդկաստանից զենք գնել:

Նշվել է նաև, որ Չինաստանի հետ համագործակցելը քաղաքական ոլորտում միանշանակ չէ, քանի որ Չինաստանում ապրում են թուրքական ծագում ունեցող, թուրքական լեզվաընտանիքի պատկանող ժողովուրդներ, որոնք կարող են ճնշող դեր ունենալ որոշ հարցերում:

ԱՄՆ-ն ևս որոշակի շահերից ելնելով է փորձում ՀՀ-ի հետ հարաբերություններ հաստատել, սակայն վերջինիս խոչընդոտում են ՀՀ հարաբերությունները Ռուսաստանի հետ:

> ***«ԱՄՆ-ն էլ իրա շահը ուներ, իհարկե, որ գալիս էր ստեղ, մինչև էդ պատերազմից առաջ ինքը շատ ծրագրեր առաջարկեց՝ խելացի էդ անասնագոմերի ծրագրերն էր, ինտենսիվ այգիների ծրագրերը, բայց որը մերժվեց Հայաստանի կողմից, որովհետև Հայաստանը գտնվում ա Ռուսաստանի փեշի տակ, սենց ասած»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս***

Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունները այս պատերազմի հետևանքով

Ինչպես Երևանի, այնպես էլ մարզերի բնակիչներն առաջինն երթինն նշել են բնակարանների վարձակալման գնաճը, որը, երիտասարդների կարծիքով, պայմանավորված է ոչ միայն Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի պատճառով Հայաստան տեղափոխվածների մեծ հոսքով, այլև հայաստանցիների կողմից բնակարանների գների բարձրացմամբ.

> ***«Ցավոք, մարդիկ կան, ովքեր այս իրավիճակն ի օգուտ իրենց են անում՝ հային տանից հանեն, ռուսին շատ թանկ գնով տան: Բայց չէ՞ որ մենք ինքնապահպանման խնդիր ունենք, ռուսը ժամանակավոր ա՝ թեկուզ 10 տարի ապրի, մեկ ա գնալու է հետ իր երկիր»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գյումրի***

Մարզաբնակ երիտասարդներին հատկապես անհանգստացնում է բնակարանների թանկացումը ոչ այնքան իրենց քաղաքում, որքան՝ Երևանում, որտեղ գտնվում է բուհերի մեծ մասը, և լինելով ուսանող՝ մարզաբնակ երիտասարդներն այժմ բախվել են Երևանում բնակարանների վարձակալման աննախադեպ դժվարություններին.

> ***«Օրինակ՝ ուսանողը, ով գյուղից գնում ա Երևան սովորելու, էն ժամանակ, որ վարձով տան համար պիտի վճարեր 50-70 հազար դրամ, հիմա Երևանում պետք ա վճարի 200.000 պլյուս, ռուսը կարող է վճարել այդքան, իսկ մեր ուսանողը ո՞նց էդքան մուծի»:***
> ***Ա.ս., 18-35 տ. խումբ, գ. Գետաշեն***

Քննարկումների ժամանակ նաև բարձրաձայնվել են հայաստանյան աշխատաշուկայի սահմանափակության պայմաններում Հայաստան տեղափոխվածների (հավաքական կարծրատիպային կերպով անվանվող՝ «ռուսների») մրցակցային առավելությունները, որոնց հետևանքով տեղացիները կորցնում են աշխատատեղերը՝ ի օգուտ ներգաղթողների: Միևնույն ժամանակ նշվեց, որ Հայաստան տեղափոխվածները կա՛մ իրենք են աշխատատեղեր ստեղծում և զբաղեցնում (մասնավորապես՝ IT, սպասարկման ոլորտներում), կա՛մ էլ զբաղեցնում են աշխատաշուկայի այն հատվածը, որը դատարկ է մնացել և հրապուրիչ չէ տեղացիների համար.

> ***«Որ ընկերների հետ խոսում ենք, շատերի բողոքը էն ա, որ ռեստորաններում սկսել են ռուս մարդիկ ընդունել աշխատանքի, որոնց ռուսերենը ավելի լավ ա ու իրանց հաճախորդներին ավելի լավ են սպասարկում, այսինքն հայը, ով մի քիչ վատ էր խոսում ռուսերեն, ու ով աշխատում էր, իրան փոխարինում են լավ ռուսերեն իմացողի հետ՝ իրենց բիզնեսը առաջ տանելու համար»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Վանաձոր***

> ***«Ես Երևան վաղուց չեմ գնում, հազվադեպ եմ ընդեղ հայտնվում, բայց ծանոթներ ունեմ, իմացել եմ՝ սպասարկման ոլորտի աշխատանքներ կան, որ մարդիկ կան, ում ճանաչում եմ, հրաժարվել են, իսկ ռուսները շատ մեծ հաճույքով էդ աշխատատեղերը զբաղացնում են»:***
> ***Ա.ս., 18-35 տ. խումբ, ք. Վայք***

Հետաքրքիր են երիտասարդների դիտարկումները՝ Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ընթացքում Հայաստան տեղափոխվածների ինտեգրման գործընթացների մասին: Մասնավորապես նշվել է, որ նորեկները փորձում են հարմարվել նոր պայմաններին՝ ստեղծելով իրենց մշակութային տարածությունները և շփվելով ոչ այնքան տեղացի հայերի, որքան միմյանց հետ:

> ***«Վանաձորում գոյություն ուներ մի հատ ակնկրկնելի փաբ, դա մեր ընկերներից մեկն էր, որ անցած տարի վաճառեց էդ փաբը, լրիվ ուրիշ պատճառներով, և արդյունքում առել են ռուս-ուկրաինացի զույգ, ու հիմա, որ գնում ես փաբ՝ 95 տոկոսը ռուսախոս ա, լրիվ փոխվել ա միջավայրը: Իրանք ամեն ուրբաթ օր գալիս, փարթիներ են անում, էդ ձևով իրանց համայնքն են ստեղծել ու փորձում են ինքնուրույն ինտեգրվեն, բայց ոչ մարդկանց մեջ»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Վանաձոր***

Քննարկումներին մասնակցած երիտասարդները այս մոտեցումը ավելի շուտ բացասաբար են գնահատում՝ փաստորեն հաշվի չառնելով այն հանգամանքը, որ Ռուսաստան և այլ երկրներ տեղափոխվող հայաստանցիների առնվազն առաջին սերունդը տեղափոխվելուց հետո հետևում է հարմարվելու նույն սկզբունքին՝ նախընտրում է բնակվել և շփվել բարեկամների, հայրենակիցների հետ, ընդ որում՝ ոչ միայն ազգակիցների, այլև իրենց մարզի, բնակավայրի ներկայացուցիչների հետ:5

Որպես Հայաստան տեղափոխվող «ռուսների» մեծ հոսքերի դրական ազդեցություն՝ նշվել են ֆինանսական ներդրումները, ստեղծված տնտեսական հնարավորությունները.

5 Տե՛ս, օրինակ, Armenians around the World: Migration and Transnationality (ed. by A. Mkrtichyan). «Peter Lang GmbH», Frankfurt am Main, 2015:

«Ես կոնկրետ շատ լավ եմ վերաբերվում, ինչքան շատ մարդ գա, էդքան լավ ա լինելու, եթե դա քո սուվերենության վրա չի ազդում, թող գան, ապրեն, չպիտի վատով նայես, գալիս բիզնես են դնում, թեկուզ գալիս բանվորություն են անում, դա տնտեսություն ա զարգացնում, մարդկային ռեսուրս ա»:
Ա.ս., 26-35 տ. խումբ, գ. Ջրվեժ

«Օրինակ՝ մեր ընտանիքի վրա շատ լավ ա ազդել, անկեղծ բան եմ ասում, քանի որ ախպերս Ռուսաստանի քաղաքացի ա, ու ապրում են ընդեղ, ու ունի շինարարական խանութ, ու քանի որ հիմա ռուսները չեն կարում Ռուսաստանից գնան, շինարարություն են անում, դե մոտավոր կես հեկտար հող ա արդեն վերցրել, որի վրա խանութ ա հեսա սարքում, դա մեզ համար շատ հաճելի է»:
Ա.ս., 26-35 տ. խումբ, ք. Վանաձոր

Հետաքրքիր է նկատել, որ ՀՀ մարզերի քաղաքաբնակ երիտասարդներն ավելի շատ վախեր ունեն՝ արտերկրից ժամանողների կողմից «մեր մշակույթը փոխելու» վերաբերյալ, քան երևանաբնակները: Նկատելի է, որ Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ընթացքում Հայաստան տեղափոխվածների մասին խոսելիս՝ մարզաբնակների մի մասը պատկերացում ունի անուղղակիորեն. տեղափոխվածների մասին կա՛մ լսել են ուրիշներից, կա՛մ իրենց տեսել՝ Երևան այցելելով: Միևնույն ժամանակ նորեկների հանդեպ մարզաբնակների վախերն ակնհայտորեն կարծրատիպային են, հաճախ՝ չփաստարկված և խիստ զգացմունքային.

«Օրինակ՝ ես մի քանի օր առաջ Երևանում էի, ես ահավոր շատ էի ռուս տեսնում քաղաքում, ու իմ մոտ նենց տպավորություն ա, որ ես Ռուսաստանում եմ, ոչ թե Հայաստանում, և իրոք քո հոգեվիճակի վրա ազդում է, որովհետև քո երկրում տեսնում ես ավելի շատ ռուս, քան հայ»:
Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս

«Էն օրը Երևանում քայլում էի, ու պահի տակ ինչ-որ կողմից հայերեն խոսակցություն լսեցի, անկեղծ եմ ասում, էնքան ուրախացա, նենց էի ուրախացել»:
Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Վանաձոր

Եթե Երևանում իրականացված քննարկումների մասնակիցներն այդ իմաստով բաժանվել էին երկու խմբերի, և մեծամասնական խումբը Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ընթացքում Հայաստան տեղափոխված ռուսներին ու ուկրաինացիներին հիմնականում դիտել է որպես հետաքրքիր, այլընտրանքային մշակույթ կրողների, կենցաղում հիմնականում պարկեշտ և անգամ օրինակելի վարք դրսևորողներին, ապա մարզերի երիտասարդությունը կիսում է երևանցիների այն փոքր խմբի կարծիքն ու վախերը, թե տեղափոխվածները հայկական կենցաղի, մշակույթի, ավանդույթների առումով սպառնալիք են: Քննարկումների ընթացքում հաճախ խոսվել է նորեկների արտաքին տեսքի, տեղացիներից էականորեն տարբեր վարքի մասին, որը չի տեղավորվում հայաստանցիների /այս դեպքում՝ մարզաբնակների/ բարքերի, բարոյականության մասին պատկերացումների մեջ.

«Խանութ էինք գնում, մի աղջիկ եկավ՝ կարճ շորտիկով, ծխախոտը ձեռքին, ինքն արդեն տպավորություն էր թողել շրջապատի վրա...հանգցրեց ծխախոտը ու մտավ խանութ...»:
Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Գյումրի

Հատկապես նշվում է նորեկների հնարավոր բացասական ազդեցությունը հայ երեխաների վրա. հետաքրքիր է նկատել, որ «երեխաների» փաստարկը հաճախ օգտագործում են այն երիտասարդները, ովքեր ներկայացնում են 18-25 տարիքային խումբը, և, կարծես թե, պետք է ավելի քիչ անհանգստանային երեխաների հանդեպ ազդեցությունից, քան այլ տարիքային խմբերը.

> ***«Հիմա դատում ենք, ասում ենք լավ բան չի լինելու, բայց 10 տարի հետո մենք նորմալ ենք համարելու, որ մեր 14 տարեկան երեխաները թմրադեղեր են օգտագործելու, անչափահաս սեռական կյանքով ապրեն»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս***

> ***«Ազատության միտված երիտասարդներն ավելի կընկնեն դրա գիրկը, վերահսկողությունը շատ տեղերում կթուլանա և շատ դժվար կլինի մեր փոքր սերունդին ճիշտ դաստիարակել»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գյումրի***

Ավելի դրական, առնվազն իրատեսական կարծիքներ սակավ էին.

> ***«21-րդ դարում չես կարող քո սահմանները փակ պահել այլ ազգի, այլ մշակույթի առաջ, արդեն ամոթ է նույնիսկ»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Գյումրի***

Բացի դրանից՝ մարզային քննարկումներում նշվել է Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ընթացքում Հայաստան տեղափոխված «ռուսների» որոշակի դրական ազդեցությունը հայկական մշակույթի տարածման առումով. իրենք ակտիվորեն այցելում են մշակութային վայրեր, մասնակցում են իրադարձությունների, լուսաբանում դրանք, քարոզում հայկականը (26-35 տարիքային խումբ, ք. Վայք):

Երիտասարդների մտավախությունները կապված են նաև Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ընթացքում մարդկանց՝ Հայաստան ներհոսքի վերահսկման հանդեպ քննադատական վերաբերմունքով, որի հետևանքով Հայաստան կարող են գալ և ազատորեն ակտիվություն ցուցաբերել հակապետական նպատակներ, ծրագրեր ունեցողները.

> ***«Թուրքերը ռուսական անձնագրերով գալիս են Էստեղ ու տուն են գնում: Ես պատահական 2 թուրքի տուն եմ վաճառել՝ առանց իմանալու, որ թուրք են»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գյումրի***

Որոշ մասնակիցներ մտավախություն ունեն, որ «ռուսների» մեծաքանակ հոսքը Հայաստան կարող է հետագայում ազդել քաղաքական համակարգի փոփոխությունների վրա: Նրանք կարծում են, որ նման ինտենսիվ հոսքի շարունակականությունը հետագայում կարող է հանգեցնել կառավարման մարմիններում ռուս գործարարների կամ քաղաքական գործիչների առկայության: Մասնակիցներից մեկն էլ մտավախություն ունի, որ ռուսների հայտնվելը Հայաստանում հետագայում կարող է «Հայաստանին դնել նուն դրության մեջ, որում այժմ Ուկրաինան է».

> ***«Ինձ համար ռուս միգրանտների հետ կապված շատ ուժեղ վախենալու փաստ կա, իրանք եկել, իրանց համար ապրում են, իմ հաշվին չեն ապրում, բայց Էս մարդկանց շատ գալը ու ներգրավվածությունը մեր քաղաքական կյանքում մի քանի տարի հետո իմ համար աղետալի ա, որ կարողանան դիրքորոշում ունենան, օրինակ, ԱԺ-ում և այլ տեղեր»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Վանաձոր***

Հայաստանի անվտանգությունը, շահերը, անհրաժեշտ դիրքորոշումը՝ Ուկրաինայում ընթացող պատերազմի պայմաններում

Մարզաբնակ երիտասարդների կարծիքով՝ ՌԴ-ի գործողություններն արդարացված են նրանով, որ ՌԴ-ն «որպես գերտերություն պայքարում է իր սահմաններին մոտեցող արևմտյան ուժերի դեմ»: Ուկրաինայի գործողություններն արդարացված են նրանով, որ մարդիկ պայքարում են «իրենց տարածքների», «իրենց տների» համար, որ «իրենց սերունդների համար ապրելու տեղ լինի»:

Զուգահեռներ անցկացնելով Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի և Ղարաբաղյան հակամարտությունների միջև՝ մարզաբնակ երիտասարդներից ոմանք երկու հակամարտությունների կառուցվածքներում Հայաստանը նմանեցրել են Ուկրաինային. երիտասարդների կարծիքով՝ երկուսն էլ պաշտպանում են իրենց տարածքները, մինչդեռ հարձակվողի դերում հանդես են եկել Ադրբեջանն ու Ռուսաստանը: Կար նաև այլ կարծիք, որի համաձայն Ռուսաստանի և Ադրբեջանի պատերազմ սկսելու դրդապատճառները տարբեր էին. Ռուսաստանի դեպքում՝ կանխել Արևմուտքի ընդլայնումն ու Ուկրաինայի հայտնվելը հակառակորդի ճամբարում, Ադրբեջանի դեպքում՝ հայկական պատմական տարածքների գրավումը.

> ***«Ռուսաստանն է հարձակվել Ուկրաինայի վրա՝ անկախ ամեն ինչից, ճիշտ այնպես, ինչպես Ադրբեջանը՝ Հայաստանի: Այնտեղ խաղասեղանին դրված էր Դոնեցկը, Լուգանսկը և այլն, իսկ Էստեղ՝ Արցախը: Այսինքն՝ լոգիկան ու բարոյականությունն ասում է, որ մենք պիտի կանգնեինք Ուկրաինայի կողքին, բայց արդյո՞ք կարող ենք... այդ դեպքում Ռուսաստանը մեզ ճնշման տակ կդնի (գազ, ռազմաբազա, էլեկտրականություն)»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Գյումրի***

> ***«Դրանք տարբեր են իրարից, որ Ուկրաինան գնում ա դեպի Եվրոպա, խնդիրը, ըստ իս, դա ա: Իսկ մեր դեպքում Էստեղ տարածքի խնդիրն ա, երբ որ Ադրբեջանը միշտ ա ուզեցել վերցնի ԼՂԻՄ-ի տարածքը...» :***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Վայք***

Ինչպես երևանաբնակ, այնպես էլ մարզաբնակ երիտասարդների հավաքական կարծիքն է՝ անհրաժեշտ է չմիջամտել, կողմնակալություն չցուցաբերել Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմին: Քննարկումների համաձայն՝ Հայաստանը փաստացի այդպես էլ վարվում է, և չնայած Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունների՝ իր դիրքորոշումը փաստացի չեզոք է.

> ***«Ինչ-որ տեղերում էլ, եթե քվեարկություն ա լինում Ռուսաստանի դեմ սանկցիաներ կիրառելու կամ Ուկրաինայի կողմից ինչ-որ մի բան անելու, Հայաստանը էն երեք-չորս երկրներից ա, որ միշտ ձեռնպահ ա քվեարկում: Այսինքն՝ կարանք ասենք, որ էդքան էլ ռուսամետ չի»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, ք. Արմավիր***

Ռուսաստանի մասնակցությունը պատերազմին ընկալվում է երկու առումներով. մի կողմից, երիտասարդների կարծիքով, Հայաստանը կարող է ընկալվել որպես Ռուսաստանի դաշնակից նաև Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմում, որի հետևանքով արևմտյան երկրների կողմից կենթարկվի պատժամիջոցների: Մյուս կողմից, եթե չլիներ պատերազմը Ուկրաինայի հետ, Ռուսաստանն ավելի ազատ կլիներ և, հավանաբար, ավելի հայամետ դիրքորոշում կստանձներ Ղարաբաղյան հակամարտության հարցում: Բացի դրանից՝ Ռուսաստանին չաջակցելով՝ պետք է փորձել նաև չխանգարել:

> ***«Մի տխուր ֆակտոր կա, որ աշխարհը Հայաստանը ընկալում ա Ռուսաստանի հովանու ներքո գտնվող տարածաշրջան, ու ինչ էլ լինի, մեզ պատրաստ չեն սատարել Էնքան, ինչքան որ Ուկրաինային»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Վանաձոր***

> ***«Պատերազմի ավարտին զուգահեռ Ռուսաստանն ավելի հանգիստ կլինի ու կկարողանա որոշում կայացնել մեր ազգի համար»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գյումրի***

> ***«Դե մարդկային արժեքներով նայենք, բնականաբար, պետք է աջակցել Ուկրաինային: Բայց եթե նայենք մեր էսօրվա քաղաքական, պատերազմական ու անվտանգային վիճակից, ենթադրաբար պետք ա ոչ թե սատարել ՌԴ-ին, այլ գոնե հակառակ կողմ դուրս չգալ»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, ք. Արմավիր***

Մարզաբնակ երիտասարդների կողմից բազմիցս նշվել է, որ Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմից օգտվում են Թուրքիան և Ադրբեջանը՝ օգուտներ քաղելով միջնորդական դերից, Ռուսաստանի զբաղված լինելուց և հնարավոր թուլացումից.

> ***«Հիմա Ադրբեջանը սպասողական վիճակում է, ու երբ Ռուսաստանը թուլանա, հարմար պահը օգտագործելով կհարձակվի նորից»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Գյումրի***

> ***«Սեպտեմբեր ամսին, երբ Սյունիքում սկսվեցին իրադարձությունները,[6] այդ ժամանակ Ռուսաստանում և Ուկրաինայում բավականին ծանր շրջան էր, և մենք տեսանք, թե ինչպես է թշնամին դրանից օգտվում, և ըստ իս՝ դա ոչ շահեկան կլինի մեր համար, որովհետև Թուրքիան ու Ադրբեջանը միշտ ակտիվանում են էդ ընթացքում, երբ տեսնում են, որ ռուսը զբաղված ա իր տարածաշրջանով, իրանք փոքր հարձակումներ են ձեռնարկում:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս***

Ուկրաինայի հանդեպ առկա է ոչ միայն կարեկցում, անտարբերություն, նաև՝ բացասական վերաբերմունք, որը պայմանավորված է 2020 թ. ղարաբաղյան պատերազմի ժամանակ Ուկրաինայի ադրբեջանամետ քաղաքականությամբ. նշվել է, որ Ուկրաինան Ադրբեջանին զենք և զինամթերք է մատակարարել, շնորհավորել է Ադրբեջանին «հաղթանակի» կապակցությամբ: Մինչդեռ, երիտասարդների կարծիքով, Հայաստանի պաշտոնական վերաբերմունքը Ուկրաինայի հանդեպ ոչ միայն չեզոք է, այլև որոշ հարցերում՝ աջակցող.

> ***«44-օրյա պատերազմի ժամանակ Ուկրաինան չէր խոսում ոչ մի բանի մասին, Ղարաբաղի մասին չէր խոսում, Թուրքիա-Ադրբեջան օգնություն էր տալիս: Բայց էս (Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի - խմբ.) պատերազմի ժամանակ, չգիտես ինչու, Արցախում հավաքվում ա օգնություն և ուղարկվում ա Ուկրաինա...»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գորիս***

> ***«Այդ ժամանակ երևաց, որ իրենք մեր հետ չէին...Ադրբեջանի հետ իրար սեր էին խոստովանում»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Գյումրի***

> ***«Կար ժամանակ, երբ որ նույն Ուկրաինան բացահայտ... այ էն ֆոսֆորային անձրևը, որ թափվեց Կուբաթլուի վրա, Ուկրաինան էր տվել Ադրբեջանին ու բացահայտ: Եթե էսօր Հայաստանի կողմնորոշումը լինի Ուկրաինա, դա մի քիչ աբսուրդային կլինի մեր կողմից, մեր ժողովուրդն էլ դա ուրիշ ձև կընկալի»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Մարտունի***

Նշվել է, որ 2020թ. ղարաբաղյան պատերազմից և կորուստներից հետո հայաստանցիներն անզգայունակ են դարձել, անտարբեր, ուստի և այժմ Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի հանդեպ ավելի շատ անտարբեր են, քան կողմնակալ: Երիտասարդների կարծիքներում

6 Նկատի ունեն 2022 թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումների հարձակումը ՀՀ տարածքի վրա, տե՛ս. Սեպտեմբերի 13-ի ադրբեջանական հարձակման հետևանքով անհետ կորած է 29 մարդ: Ազատություն, 19.10.2022, հետևյալ հղումով՝
https://www.azatutyun.am/a/32091450.html

հնչում է դժգոհություն հայկական հիմնախնդիրների հանդեպ միջազգային կառույցների, այլ պետությունների անտարբերությունից: Արդարության տեսանկյունից՝ ուրիշի հանդեպ պետք է վարվել այնպես, ինչպես ինքն է քո նկատմամբ վարվել. այս իմաստով, ուկրաինական կողմի տառապանքներն ու դժվարությունները հասկանալով, մարզաբնակ հայ երիտասարդները գտնում են, որ Ղարաբաղյան պատերազմի ընթացքում ուկրաինական կողմին Ղարաբաղում ապրողների տառապանքները չէին հետաքրքրում, ուստի փոխադարձ անտարբերությունն այժմ բացատրելի կլիներ.

> ***«Իմ շրջապատում անտարբեր են, ինչը բացատրվում է նրանով, որ երբ մենք էինք պատերազմի մեջ, իրենք ուշադրություն չէին դարձնում: Հիմա էլ նույն վերաբերմունքը հայ հասարակությունն է ցույց տալիս»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գյումրի***

> ***«Մենք տեսել ենք ավելի վատ բաներ, քան Ուկրաինան: Երբ մենք էինք պատերազմում, ոչ մեկին մեր 18 տարեկան երեխաները չէին հետաքրքրում, իսկ Ուկրաինայի կողքը գրեթե ամբողջ աշխարհն է կանգնած»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գյումրի***

Երիտասարդների կանխատեսումները ապագայի վերաբերյալ

Ինչպես երևանաբնակ, այնպես էլ մարզաբնակ երիտասարդների պատկերացումները Հայաստանի ապագայի, նաև՝ տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացների հեռանկարների մասին, անորոշ են, հիմնականում՝ հոռետեսական: Դրական զարգացումների մասին խոսում են՝ որպես հույսի, իսկ բացասական՝ ելնելով ներկայիս իրավիճակից և փաստերից:

> ***«Իրականում ունենք մենք երազանքներ, և դա նաև համազգային երազանքներ են, վերադարձնել կյանքը բնական հունի»:***
> ***Ա.ս., 26-35 տ. խումբ, ք. Վանաձոր***

Դրական զարգացումների պարագայում ակնկալվում է.

- Լեռնային Ղարաբաղի տարածքների վերադարձ Հայաստանին,
- Ադրբեջանի միջազգային ճանաչում՝ որպես ագրեսորի,
- Հայաստանում իշխանափոխություն,
- խաղաղության հաստատում:

Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ելքերի հետ կապված՝ Հայաստանի համար վերոնշյալ դրական զարգացումներն ավելի հավանական են, եթե Ռուսաստանը պատերազմում հաղթի և ոչ թե պարտվի. և՛ քաղաքաբնակների, և՛ գյուղաբնակների կարծիքով՝ Ռուսաստանի պարտության դեպքում Հայաստանը կդառնա անպաշտպան:

> ***«Ռուսաստանի պարտություն՝ Հայաստանը կթուլանա, քանի որ այն այժմ գտնվում է Ռուսաստանի ազդեցության տակ, ու վերջինիս պարտության հետ Թուրքիան ավելի համարձակ կլինի պատերազմ սկսելու առումով, քանի որ աշխարհն արդեն չի վախենա Ռուսաստանից: Ադրբեջանն ու Թուրքիան ավելի մեծ տեմպերով կսկսեն իրենց՝ «Մեծ Թուրանի» գաղափարի իրագործումը»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գյումրի***

«Հայաստանի համար էնքանով ա վատ ռուս-ուկրաինական պատերազմը, որ եթե Ռուսաստանը ինչ-որ բան կարար աներ Հայաստանի համար, էս պահին չի կարա, որովհետև ինքը պատերազմի մեջ է, դրա համար մեզ ընդհանրապես պետք չի այդ պատերազմը»:
Ա.ս., 18-25 տ. խումբ, գ. Գետաշեն

«Եթե Ռուսաստան չեղավ, Հայաստան չի լինի»:
Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Հրազդան

«Մեզ ձեռ չի տա, որ ռուսը թուլանա: Եթե ռուսը թուլացավ, մեր վիճակը օր օրի ավելի վատ կլինի»:
Ի.ս., 26-35 տ. խումբ, գ. Ալաշկերտ

Մարզաբնակ երիտասարդների կարծիքով՝ ներկայիս իրավիճակի զարգացումը կարող է բերել է՛լ ավելի մեծ դժվարությունների, խնդիրների: Այս իմաստով Հայաստանի համար դիտարկված ամենավատ ելքերից է պետականության կորուստը՝ զանգվածային արտագաղթի, թուրք-ադրբեջանական շարունակական ագրեսիաների հետևանքով: Կարևոր է նկատել, որ 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության մեջ ներկայացված ճանապարհների ապաշրջափակման ներքո Հայաստանի տարածքի միջով թուրք-ադրբեջանական «միջանցքի» բացումը բոլորի կողմից ներկայացվել է որպես սպառնալիք, որի հետևանքով հավանական է ամբողջ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) հայտնվելն Ադրբեջանի կազմում, Հայաստանից Սյունիքի և Վայոց Ձորի անջատումը, հայկական պետականության կորուստը:

«Ադրբեջանի մարտական գործողությունները հիմնականում տանում են միջանցքի տրամադրմանը մեր կողմից, որ մեզ խեղճացնի, մենք էլ ստիպված ենթարկվենք, տանք էդ միջանցքը, էդ միջանցնք էլ որ տվեցինք, Իրանի հետ կապն ա կտրվում, մեր երեք հիմնական քաղաքները կորցնում ենք՝ Գորիս, Ղափան, Մեղրի ավտոմատ մնում ա իրանց»:
Ա.ս., 18-35 տ. խումբ, ք. Վայք

«Ամենավատ սցենարն այն է, որ Հայաստանը՝ որպես այդպիսին, չի լինի քարտեզի վրա, հայերը կցրվեն աշխարհով մեկ՝ սփյուռքի տեսքով, բայց եթե այդ տարածքը չլինի, սփյուռքն էլ ո՞ւմ է պետք»:
Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Գյումրի

«Մտավախությունս էն ա, որ մենք հեսա Հայաստանը կորցնելու ենք, փաստացի պատերազմը երեք փուլով ա ընթացել. առաջին փուլը էն ա, որ մենք Արցախից որոշակի հատված կորցրեցինք, երկրորդը, որ իրանք անընդհատ սենց կրակում են, հայաթափում են անում, ով որ հնարավորություն ունի, փախնում ա Հայաստանից, երրորդը էն ա, որ մենք քիչ-քիչ սեղմվում ենք օղակի մեջ, քիչ-քիչ մենք կորցնում ենք մեր հողերը. հիմա արդեն Մարտունին էլ ա դարձել առաջնագիծ [Գեղարքունիքի մարզ], սա պանթուրքիզմի ծրագիրն ա»:
Ա.ս., 18-35 տ. խումբ, գ. Գետաշեն

Լեռնային Ղարաբաղի հայաբնակ մասի (Արցախի Հանրապետության) անվտանգությունն ու առհասարակ գոյությունն ուղղակիորեն կապվում են ՌԴ խաղաղապահների հետ. երիտասարդներին մտահոգող հանգամանքներից է խաղաղապահների տեղակայման ժամկետի ավարտից հետո Արցախի ապագան: Քննարկումների ժամանակ երիտասարդները ցանկություն են հայտնել, որ խաղաղապահների առաքելության դադարեցման պարագայում Արցախի բնակչությունը կարող է ներառվել ՌԴ կազմում:

> ***«Պայմանագիր է կնքվել խաղաղապահ զորքերի հետ, ինչը 5 տարի հետո ավարտվում է, որն էլ բացասական հայացք է առաջացնում»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Գյումրի***

Հայաստանի դրական ապագայի հույսերը մարզաբնակ երիտասարդները չեն կապում Արևմուտքի պետությունների միջամտության և աջակցության հետ՝ ելնելով ինչպես պատմական անցյալից, այնպես էլ ներկայիս իրողություններից.

> ***«Անգլիական նավերը չեկան Հայաստանի սարերը»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Գյումրի***

> ***«Օրինակ՝ մարդիկ կան, որ ասում են՝ Ռուսաստանը Հայաստանին աջակից երկիր ա, մարդիկ էլ կան, ասում են՝ Հայաստանի համար վատ քայլեր ա արել: Կարա նենց ստացվի, որ Ամերիկան գա, ինչ-որ ժամանակահատվածում լինի մեզ բարեկամ՝ դաշնակից երկիր, բայց, իմ կարծիքով, օրերից մի օր Ռուսաստանից ավելի վատը կանի Հայաստանի հանդեպ»:***
> ***Ա.ս., 18-25 տ. խումբ, գ. Գետաշեն***

Չնայած ապագայի վերաբերյալ հիմնականում հոռետեսական սպասումների և ապագայի անորոշության՝ մարզաբնակ երիտասարդների մոտ առկա է սեփական ուժերին հավատալու, հատկապես 2020թ. Ղարաբաղյան պատերազմի կորուստներից վերականգնվելու որոշակի ձգտում. հայրենիքի պաշտպանության համար զոհվածների առաջ պարտավորված են զգում: Քննարկումների մասնակից երիտասարդները նշել են, որ անհրաժեշտ է լինել լավատես, տրամադրվել դրական սպասումներին և փոփոխություններին: Միևնույն ժամանակ նշվել է փոխվելու, սեփական թերությունները շտկելու անհրաժեշտությունը.

> ***«Եթե մենք պետք ա ապրենք ուրիշի կյանքի հաշվին, էդ շատ ա ծանրանում մեր վրա, ու պետք ա կարանանք դրանից դուրս գանք հենց էդ գիտակցմամբ, որ դու պետք ա ապրես ու մեկի փոխարեն մի քանի անգամ»:***
> ***Ի.ս., 18-25 տ. խումբ, ք. Հրազդան***

> ***«Ես տվյալ իրավիճակը մի փոքր ծայրահեղական համեմատություն անցկացնեմ, մարդու երեխան ինչքան էլ վատն է լինում, մարդը միշտ փորձում է երեխայի ապագան լավը տեսնել... ինչքան էլ մեր երկրի վիճակը ծայրահեղ լինի, ու եթե ամեն մեկս նեգատիվ մոտեցում ցուցաբերենք մեր ապագայի կառուցման հարցի վերաբերյալ, ինձ թվում ա՝ դա այդպես էլ կլինի»:***
> ***Ի.ս., 26-35 տ. խումբ, ք. Մարտունի***

> ***«Կախված ա մեր հասարակությունից, պիտի սերնդափոխություն լինի, Էսօրվա գետնին աղբ գցողը էլ չգցի»:***
> ***Ա.ս., 26-35 տ. խումբ, ք. Իջևան***

Եզրակացություն

Այսպիսով՝ ռուս-ուկրաինական հակամարտության (այդ թվում՝ 2022թ. փետրվարի 24-ին մեկնարկած Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի) մասին հայաստանյան երիտասարդության պատկերացումները պայմանավորված են մի շարք գործոններով, այդ թվում՝

- հակամարտության մասին տարաբնույթ, հիմնականում՝ առցանց տեղեկատվական ալիքներով ստացվող տեղեկատվությամբ,
- ռուս-ուկրաինական հակամարտության կողմերի մասին պատկերացումներով և այդ պետությունների հանդեպ վերաբերմունքով,
- տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական գործընթացներով,
- հայաստանցիների համար արդիական և տարածաշրջանային անվտանգային դինամիկայի համար սկզբունքային նշանակություն ունեցող Ղարաբաղյան հակամարտության ընթացքով, այդ թվում՝ 2020թ. ղարաբաղյան պատերազմի հետևանքներով,
- Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հայաբնակ մասի (Արցախի Հանրապետության) անվտանգության վրա Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ազդեցության հետևանքների կանխատեսումներով:

Տեղեկատվական բոլոր միջոցների հանդեպ երիտասարդների վստահության մակարդակը ցածր է, սակայն ավանդական ԶԼՄ-ին մայրաքաղաքի և ՀՀ մարզերի երիտասարդությունը վստահում է ավելի քիչ, քան առցանց լրատվամիջոցներին և ալիքներին: Լրատվամիջոցների հանդեպ վստահության մակարդակի կտրուկ անկման մասին երիտասարդները խոսում են հատկապես 2020թ. ղարաբաղյան պատերազմի համատեքստում, երբ հաղորդվող տեղեկատվությունը պետության և հասարակության համար կարևոր հարցերի շուրջ բազմիցս չէր համապատասխանում իրականությանը: Նույնը վերաբերում է Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի մասին ստացվող հանրային տեղեկատվությանը, որին երիտասարդները քիչ են վստահում, համադրում են տարբեր աղբյուրներ, համեմատում միջանձնային շփման և սեփական եզրահանգումների, փորձի հետ:

Ռուս-ուկրաինական հակամարտության պատճառների մասին հայաստանյան երիտասարդների պատկերացումները կարելի է բաժանել երկու խմբի. պատկերացումների մի խմբում հակամարտությունն ունի աշխարհաքաղաքական բնույթ, այն աշխարհի բաժանման հերթական պատմական փուլի դրսևորում է, պայքար է գերպետությունների և դաշինքների միջև ազդեցության գոտիների համար: Մասնավորապես՝ արդի փուլում աշխարհաքաղաքական փոխակերպումների տիրույթում են հետխորհրդային որոշ պետություններ (մասնավորապես՝ Ուկրաինան, Հայաստանը), նաև Արաբական աշխարհի պետությունները (մասնավորապես՝ Սիրիան), որոնք իրենց ազդեցության գոտի դարձնելու համար միմյանց հետ են պայքարում Ռուսաստանը, Արևմուտքը (ՆԱՏՕ, ԵՄ, ԱՄՆ), Թուրքիան: Այս տեսանկյունից Ռուսաստանի պատերազմը Ուկրաինայում Ռուսաստան-Արևմուտք հակամարտության դրսևորում է, մարտադաշտ:

Պատկերացումների մյուս համախմբում ռուս-ուկրաինական հակամարտությունն ու Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմը պատճառաբանվում է ՌԴ և Ուկրաինայի առաջնորդների անձնային հատկություններով, նկրտումներով, մոտեցումներով և խնդիրներով:

Հայաստանյան երիտասարդների հավաքական կարծիքի համաձայն՝ Հայաստանը ռուս-ուկրաինական հակամարտության հարցում պետք է առավելապես չեզոք լինի՝ անկախ իր դաշնակցային պարտավորություններից, հակամարտության բնույթից և դրսևորումներից: Միևնույն ժամանակ երիտասարդների վերաբերմունքը հակամարտության անմիջական կողմերի՝ Ռուսաստանի և Ուկրաինայի հանդեպ ոչ միանշանակ է և հիմնականում պայմանավորված է 2020թ. ղարաբաղյան պատերազմում այդ պետությունների որոշակի

դերակատարմամբ. ՀՀ ռազմավարական դաշնակից Ռուսաստանից առկա հիասթափությունը կապված է պատերազմում հայկական կողմի պարտության հետ, իսկ Ուկրաինայի հանդեպ բացասական վերաբերմունքը՝ Ղարաբաղյան պատերազմում Ուկրաինայի կողմնակալությամբ՝ ռազմական և դիվանագիտական աջակցությամբ Ադրբեջանին և Թուրքիային: Դարձյալ հայաստանյան երիտասարդների հավաքական կարծիքի համաձայն՝ ՀՀ կողմից Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմում չեզոքության պահպանումը ներկա իրավիճակում առավել համարժեք մոտեցում է՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից անկախ:

Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի հնարավոր զարգացումների, ինչպես նաև առհասարակ ապագայի վերաբերյալ հայաստանյան երիտասարդների կանխատեսումները հիմնականում հոռետեսական են: Հայաստանի համար հատկապես 2020թ. ղարաբաղյան պատերազմից և հետագա իրադարձություններից հետո առաջ եկած նոր անվտանգային սպառնալիքները դժվար հաղթահարելի են, իսկ տարածաշրջանային անկայունությունն ու հնարավոր գլոբալ ճգնաժամը կարող են հայաստանցիների համար աննախադեպ ծանր պայմաններ ստեղծել: Փնտրելով հարաբերականորեն կայուն բևեռներ, որոնց անհրաժեշտ կլինի հարել, երիտասարդներն արձանագրում են դաշնակից Ռուսաստանի հավանական ապակայունացումն ու հակամարտության սրումը ոչ միայն Ուկրաինայի, այլև ընդլայնվող Հյուսիսատլանտյան դաշինքի երկրների հետ: Միևնույն ժամանակ հակառուսական պատժամիջոցները վնասում են նաև ԵՄ երկրներին, որի պատճառով Հայաստանի հետ հարաբերությունները ԵՄ օրակարգում կարող են երրորդ պլան մղվել: Բացի դրանից՝ հայաստանյան երիտասարդներին մտավախեցնում է Թուրքիայի և Արդբեջանի ուժեղացումը, որին նպաստում է նաև ռուս-ուկրաինական հակամարտության երկարաձգումը. խաղալով երկուսի կողմից՝ Թուրքիան և Արդբեջանը կարողանում են օգուտներ քաղել և՛ Ռուսաստանից, և՛ Ուկրաինայից, և՛ միաժամանակ հասնել իրենց ռազմավարական նպատակներին նաև Հարավային Կովկասի անվտանգային համակարգը իրենց օգտին վերակառուցելու հարցում:

KONRAD
ADENAUER
STIFTUNG

DESIGN & PRINTING
TUMO
TUMO DESIGN LLC